

ԱՇՈՏ ՆԱՅՐՈՒՆԻ
Պապմական գիր. դոկտոր

**ՅՈՒՆԻՓՈԻՆԻ ՆԱՅԱՆՎԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ
(1914-18 թթ.)**

Արեւմտահայության արեւահանության ու աքսորի վերաբերյալ առաջին հեռագրային արեւելությունը Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը Բեռլին ուղարկեց 1915 թ. մայիսի 31-ին: Նույն օրը, որի պատճենն ԱԳՆ-ն ուղարկեց նաև դր. Յոհանես Լեփսիուսին, ուներ հետևյալ բովանդակությունը. «Նայկական լրատվության դեմն առնելու և նոր հայկական զանգվածային ապստամբությունների կանխման նպատակով Էնվեր փաշան նպատակադրվել է, օգտագործելով պարսկազմական դրությունը՝ հայկական դպրոցների մի զգալի մասը փակել, հայերի փոստային հաղորդակցությունն ընդհատել, հայկական թերթերը փակել և այժմ ապստամբած հայկական կենտրոններից բոլոր ոչ միանշանակ անմեղ ընդհանրություններին վերաբնակեցնել Միջագետքում: Նա թախանձագին խնդրում է, որ մենք այդ հարցում նրան չխանգարենք: Թուրքերի այդ միջոցառումներն, իհարկե, մեզ թշնամի ամբողջ աշխարհում դարձյալ մեծ հուզումների արեւելք կտան ու նաև կշահարկվեն մեր դեմ: Միջոցառումներն, անշուշտ, մեծ խտրություն են նաև հայ ազգաբնակչության համար: Սակայն ես այն կարծիքին եմ, որ մենք իրավունք ունենք դրանք իրենց ձեռք մեջ մեղմել, սակայն ոչ հիմնովին արգելել: Ռուսաստանից սնվող հայկական սադրանքները մեծ չափերի են հասել՝ սպառնալով Թուրքիայի գոյությանը: Խնդրում եմ դր. Լեփսիուսին և գերմանա-հայկական կոմիտեներին համապատասխանաբար հայտնել, որ Թուրքիայի քաղաքական և ռազմական իրավիճակում, ցավոք, նշված միջոցառումներից խուսափել հնարավոր չէ»¹:

Լեփսիուսի նախաձեռնությամբ՝ նրա «Գերմանական առաքելություն Արևելքում» կազմակերպության և Գերմանա-հայկական ընկերության կողմից անմիջապես մի գրություն ուղարկվեց դեսպանին, որտեղ նրան կոչ էր արվում «զսպել հայերի դեմ ձեռնարկվող գործողությունները»²: Ինչ վերաբերում էր հետագա քայլերին, ապա դրանք հնարավոր էր որոշակիացնել միայն իրադարձությունների ծավալին և ընթացքին ստույգ արեւելականուց հետո, ուստի պարահական չէ, որ Լեփսիուսն իր հաջորդ այնպեղ արեւելի ունեցող իրադարձությունների մասին: Նրա ցանկությունն ԱԳՆ-ում գրավ անհրաժեշտ աջակցություն, և պերքարպտողարի արեւակալ Ա. Յիմերմանը դեսպանին հրահանգեց Թուրքիայի ՆԳ նախարար Թալեթից թույլտվություն ստանալ Լեփսիուսի ճանապարհորդության համար³:

1 „Deutschland und Armenien 1914-1918“, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919, p. 79.

2 Schäfer R., Geschichte der Deutschen Orient-Mission, Potsdam, 1932, էջ 88: Ուշագրավ է, որ Լեփսիուսը նամակում փորձել էր ընդգծել նաև դեսպանի կողմից ակտիվ միջամտության ցուցաբերման քաղաքական անհրաժեշտությունը՝ դա հիմնավորելով «Թուրքիայի շահերով», որը պետք է ձգտեր «շահել կովկասյան հայերի համակրանքը» և բացի այդ մեղմ մոտեցման միջոցով ձեռք բերել նաև իր թրիստոնյա հպատակների վստահությունը: Անդ:

3 Տե՛ս J. Lepsius, Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, էջ 22:

Դա այնուհանդերձ այնքան էլ հեշտ չէր, քանի որ ոչ միայն Բ. Դուռը, այլև դեսպանն անձամբ նույնպես ամենևին շահագրգռված չէին, որ Լեփսիուսը մեկներ Թուրքիա, ուստի պարահական չէ, որ Կ. Պոլսից ստացված պարասխանը բացասական էր: Լեփսիուսը, սակայն, համառոտն շարունակում էր պնդել Թուրքիա մեկնելու անհրաժեշտությունը: Վկայակոչելով ՆՅՐ Սոֆիայի կենտրոնական գրասենյակից աքսորի և մահապարիթների վերաբերյալ իր ստացած վերջին լուրերը⁴ նա իրավամբ այն համոզմունքն էր արտահայտում, որ հեռագրի փողկերպություններով անհնար էր իրականության մասին կարգադրել ստույգ կոտորածներ: «Դեսպանին կարծես թե պարզ չէ Էնվեր փաշայի որոշման նշանակությունը, - նշում էր: - Ջանգվածային ապստամբություններ կանխելու համար աքսորում են ոչ թե «ընդհանրիկների», որոնք «միանշանակ անմեղ չեն», այլ զանգվածների: Իսկ զանգվածների աքսորումը նշանակում է զանգվածային կոտորածներ: Այդ գիտի ամեն ոք, ով ծանոթ է Թուրքիայի ներքին պայմաններին, որոնց ներքո փողի են ունենում նման աքսորումները»:⁵

Ուղևորության թույլտվությունը ձեռք բերելու և այդ նպատակով ԱԳՆ աջակցությունն ապահովելու համար Լեփսիուսը բնականաբար ձգտում էր օգտագործել թիչ թե շար ծանրակշիռ բոլոր, և այդ թվում նաև Գերմանիայի քաղաքական շահերից բխող հիմնավորումները, ուստի հունիսի 6-ին Ա. Յիմերմանի կողմից Վանգենհայմին ուղարկվեց երկրորդ հեռագիրը. «Դր. Լեփսիուսը կամենում է այդպիսի գալ ոչ թե Բ. Դռան վրա ճնշում գործադրելու, այլ հայերին կողմնորոշելու նպատակով, - նշում էր այնպիսի պարզարարողարի փողակալը: - Նա պարբաբար է մեկնել գավառները փողի հայ առաջնորդներին թուրքական կառավարության հանդեպ լայալ փոխհարաբերությունների անհրաժեշտության պարզաբանման համար: Այցը կունենա հանգստացուցիչ ազդեցություն փողի հայերի վրա: Խնդրում եմ, հեռագրով փողեկացրեք, Դուք դրա հետ համաձայն եք»:⁶

Լեփսիուսի մեկնման առնչությամբ Բ. Դռան և դեսպանի դիրքորոշումը, սակայն, չափազանց հստակ և միանշանակ էր հիշյալ պարզաբանությանը ևս անմիջապես փողի չարալու համար. «Բ. Դռան՝ արդեն ամբողջությամբ ի կարար անվող միջոցառման պարագայում, - փողեկացնում էր դեսպանն իր՝ հունիսի 9-ի պարասխան հեռագրում, - որը զանազան ստուգապես հաստատված փաստերի միջոցով հիմնավորված է թվում, դր. Լեփսիուսի ժամանումը չափազանց ուշացած կլինի, և նրա ջանքերն արդյունք չեն ունենա: Դրանից զատ, ևս այդ այցն առավել ևս այն նկատառումով եմ համարում անժամանակ, որ դր. Լեփսիուսի գործունեությունը ևս դեռ չի պարզաբանվել⁷, և որ այն (նկատի ունի Լեփսիուսի

4 Stin „Deutschland und Armenien“, էջ 85:

5 J. Lepsius, Der Todesgang des armenischen Volkes, Potsdam, 1919, p. V:

6 “Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919)“, Материалы политического архива Министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник под редакцией В. Микаеляна, Ереван, 1995, с. 179:

7 Դեռ 1914 թ. նոյեմբերին, Թուրքիայի՝ պարերազմի մեջ մտնելուց գրեթե անմիջապես հետո, ձգվելով նպատակ այն բանին, որ արեւմտահայությունը պարերազմի ընթացքում անպայմանորեն հանդես գար Թուրքիայի կողմում, Գերմանիայի արագործնախարարությունը Գերմանա-հայկական ընկերությանն առաջարկել էր այդ նպատակով բացառական աշխատանքներ ել հայ քաղաքական և եկեղեցական ազդեցիկ շրջաններում: Ընկերությունը համաձայնեց առաջարկն ընդունել այն պայմանով, եթե գերմանական կառավարությունը խոստանար, որ ընդմիջված հայկական բարեփոխումները պարերազմից հետո կիրագործվեն: Նավաստիացումն ստանալով՝ ընկերությունը (ԱԳՆ կողմից հարկացված լրացուցիչ անձնագրով ու նաև նախարարության նյութական միջոցների հաշվին) 1914 թ. վերջին Թուրքիա գործողեց իր վարչության անդամ դր. Լիպարիար Նազարյանցին, որը պետք է

ուղևորությունը - Ա. Ն.) կարող է Բ. Դռանը վրդովել, որը, ինչպես ցույց է տալիս նախնական հավասարի գնությունը, միանգամայն դեմ է այդ այցելությանը: Բացի այդ, ես իմ ուժերի ներածին չափով անում եմ ամեն բան, որպեսզի մեղմեմ Բ. Դռան՝ չափազանց խիստ միջոցառումները»⁸:

Չնայած Լեփսիոսի ուղևորության հարցում իր որդեգրած՝ ակնհայտ բացասական դիրքորոշմանը, Վանգենհայմն այնուհանդերձ երկար ընդդիմանալ չկարողացավ, եւ հունիսի վերջին Լեփսիոսին թույլվությունը հասկացվեց այն նախազգուշացումով, որ Թուրքիայի ՆԳ նախարար Թալեաթի կողմից նրան արգելվում էր Կ. Պոլսից հեռանալ⁹: Քանի որ, սակայն, Լեփսիոսը մտադիր չէր ձեռնունայն սպասել, մինչև մեկնման թույլվությունը կհասկացվեր, նա իրեն հասած տեղեկությունների հիման վրա դեռ հունիսի 16-ին մի նամակ առաքեց ԱԳՆ՝ տեղեկացնելով, որ հակառակ դեպքում, Թուրքիայում հայության տեղահանումն ու աքսորումը ստացել էր զանգվածային բնույթ՝ եւ ծավալ¹⁰: Իսկ հունիսի 22-ին Գերմանա-հայկական ընկերության կողմից, իր ստորագրությամբ նա մի ընդարձակ ուղերձ հղեց ԱԳՆ, որտեղ ներկայացնելով հայ ժողովրդի՝ արդեն տեղահանված հայրվածների ողբերգական դրությունը¹¹ եւ միանշանակորեն հերքելով այդ միջոցառման ռազմաստրատեգիական անհրաժեշտությունը «վկայակոչող» թուրքական պաշտոնական տեսակետները՝ նա հայտարարում էր, որ թուրքական կառավարությունը պատրաստակարար իրադրությունն օգտագործելով՝ փաստորեն ձեռնամուխ էր եղել հայ ժողովրդի զանգվածային բնաջնջմանը, եւ որ տեղահանվածների թիվն արդեն հասել էր շուրջ 200. 000-ի: «Ինչպես ես արդեն տեղեկացրել եմ իմ հունիսի 16-ի նամակում, խոսքը վերաբերում է ոչ թե առանձին ընտանիքների վերաբնակցմանը, այլ Անատոլիայի շրջանների եւ Կիլիկիայի հայ բնակչության մեծ խմբերի զանգվածային աքսորմանը՝ քաղաքներ, գյուղեր, հատկապես Միջագետք: Այդ միջոցառումները չեն կարող ռազմական պատճառներով արդարացվել..., քանի որ խնդիրը մեծ մասամբ վերաբերում է այն շրջաններին, որոնք գտնվում են Անատոլիայի խորքում, ռազմական գոյություն ունեցող շրջաններին: Ակնհայտորեն փորձ է կատարվում, պատերազմի ընձեռած իրավունքների ներքո թողարկվելով՝ եւ օգտագործելով մուսուլմանների՝ սրբազան պատերազմի միջոցով բոլորովն զգացումները, ուժգին կերպով կրճարել կայսրության քրիստոնյա բնակչությունը եւ դեպի կլիմայապես անուպասար ու ոչանվորանց սահմանամերձ տարածքները բռնի տեղահանման միջոցով կորստյան դատապարտել նրան»¹²:

հանդիպումներ ունենալ Կ. Պոլսի հայոց պարիսպաքանի եւ ՆՅԴ-ի ղեկավարների հետ՝ այդ հարցում նրանց կողմնորոշելու նպատակով: Տե՛ս „Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft“, Dezember 1939, էջ 4:

8 Անդ, էջ 179-180: Դասական հավաստիացումը սոսկ դիվանագիտական դեմագոգիա էր, քանի որ նա, ինչպես շուրջով պարզ կդառնա, երբեմն այդ «միջոցառումները» մեղմելու որեւէ գործնական քայլ չցուցաբերեց:

9 „Deutschland und Armenien“, էջ 89:

10 „Армянский вопрос...“, էջ 187:

11 Լեփսիոսն այդ առավել ըմբռնելի դարձնելու համար ներկայացնում էր նաեւ փաստացի օրինակներ: «Տավրոսի լեռների եւ Զեյթունի՝ մոտավորապես 27.000 բնակիչներից, - եղում էր նա, - արական բնակչությունը արտաքին էր Դեր եւ Զորի՝ Եփրատի շուրջ ցածրադիր վայրերը, արաբական բնակչության ցեղերի մոտ (500 կմ դեպի հարավ-արևելք), իսկ կանայք, աղջիկները, երեխաները, ընդհանրապես, տեղափոխվել են Անատոլիայի շրջանը (500 կմ դեպի հյուսիս արևելք): Այսպիսով, արդամարդիկ իրենց ընտանիքներից բաժանվել են հազար կմ փարածությամբ: Փոխադրման ժամանակ երիտասարդ աղջիկներին բռնությամբ համալրակել եւ փարել են թուրքական հարեմները, մուսուլմանական գյուղերում կանանց վրա ֆիզիկական բռնություններ են գործադրել»: Անդ, էջ 188:

12 Անդ, էջ 187-188:

Երիտրոյությունների հետին նպատակների բացահայտման հետ մեկտեղ Լեփսիուսը Գերմանական կառավարությանը վճռական միջամտության դրդելու նպատակով անհրաժեշտ էր համարում պարզաբանել նաև այն վրանգավոր հետևանքները, որ ունենալու էին այդ ոճրագործությունները Գերմանիայի համար: Նայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը, նշում էր նա, բխում էր Անվարի շահերից, քանի որ հայ ազգային շրջաններում բոլորովին էր արելությունը թուրքերի հանդեպ: Մյուս կողմից այն խոչընդոտելու էր նաև Թուրքիայի արևմտական զարգացման միջոցով այդ երկրի վրա Գերմանիայի ազդեցության ամրապնդումը, քանի որ Թուրքիայի արևմտությունը հիմնականում գտնվում էր «հայերի ուսերի վրա»: Բացի այդ, հայության բնաջնջման իրողությունը թշնամի երկրներում կոգրագործվեր որպես զենք Գերմանիայի դեմ և միաժամանակ մեծ վրդովմունք կհարուցեր գերմանական ավերարանական եկեղեցական շրջաններում. հանգամանք, որ գերմանական կառավարությունը չէր կարող անտեսել: Եւ վերջապես, Թուրքիայում, որտեղ «կառավարությունը վաղուց գործում էր արևմտյան սկզբունքներով», անհնար էր, որ բնաջնջման քաղաքականությունը արևմտիկ չմղեր նաև հալածվողներին: Իսկ եթե հաշվի առնվեր այն հանգամանքը, որ թուրքական կառավարության դեմ կար «ուժեղ և վրանգավոր» ընդդիմություն, որպիսին Անվարի հետ շահերի զգալի ընդհանրություն ունեցող լիբերալների միությունն էր, ապա, ինչպես նշում էր Լեփսիուսը, Գերմանիայի շահերը պահանջում էին բացառել այդ ընդդիմության հետ Թուրքիայի ներքին քաղաքականության հանդեպ նախկինում լայն դիրք որդեգրած հայերի միավորումը, որ կարող էր տեղի ունենալ հայ ժողովրդի բնաջնջման՝ երիտրոյությունների քաղաքականության հետևանքով¹³:

Ուշագրավ է, որ Լեփսիուսի ուղերձը և այնտեղ կարարված համակողմանի բացահայտումները, որոնց մասին ԱԳՆ-ը ակնհայտորեն իրագրել էր նաև դեսպանությանը, Վանգենհայմի կողմից այն աստիճան մեծ անհանգստությամբ և դժկամությամբ էին ընդունվել, որ նա դարձյալ ջանում էր նախարարությանը դրդել երկրացի Լեփսիուսին հարկացված թույլություններ: «Նայկական հարցի շուրջ դր. Լեփսիուսի ելույթին վերաբերող հաղորդումը, - նշում էր դեսպանն ԱԳՆ հղած իր՝ հուլիսի 2-ին հեռագրում, - հարկադրում է երկյուղել, որ այս պահին նրա ժամանումն այստեղ, առանձնապես հայերի ծանր դրությանը ծանոթանալու հետևանքով, մեզ կարող է մեծ անախորժություններ պատճառել և վնասել մեր հետագա՝ ավելի կարևոր շահերը: Ձեռնարկված հարկադիր միջոցառումներից Թուրքիայի հրաժարման կամ դրանց մեղմացման միջոցով ռուսահայերին իր կողմը թեքելու հնարավորության վերաբերյալ նրա տեսակետը ևս համարում եմ ուրախ: Նմանապես ևս ևս կասկածում եմ, թե նրան կհաջողվի տեղի հայերին հանդարտեցնել, քանի որ թուրքական կառավարությունը հասարակապես արամադրված է այդ միջոցառումներն իրականացնել և վերջին օրերին նաև ձեռնամուխ է եղել դրանց: Այդ պարճառով ևս Ձեր հայեցողությանն եմ թողնում լրջորեն քննադատել դր. Լեփսիուսին այդ ուղեւորությունն իրականացնելուց»¹⁴:

Դեսպանի նախազգուշացումները, սակայն, իրենց նպատակին չհասան, քանի որ ոչ ոք և ոչինչ չէր կարող համոզել Լեփսիուսին փոխելու իր մտադրությունը. «Լեփսիուսը մեկնում է երկուշաբթի օրը և 10-14 օրից կլինի այդտեղ, - տեղեկացնում էր Ա. Յիմերմանը հուլիսի 4-ին

13 Անդ, էջ 188-189:

14 Անդ, էջ 189-190:

դեսպանին ուղարկված հեռագրում: - Քանի որ նա ձեռնարկել է բոլոր պարարասությունները և պայմանավորվածությունները, նրան եր պահելու փորձը հաջողություն չունեցավ: Նա այնուամենայնիվ խոստացավ ժամանելուն պես ներկայանալ կայսերական դեսպանությանը և խստորեն հետևել նրա ցուցումներին»:¹⁵

Ինչևէ, չնայած Թուրքիայի ՆԳ նախարար Թալեաթի կողմից Լեփսիուսին արգելվում էր այցի ընթացքում Կ. Պոլսից դուրս գալ, այնուամենայնիվ Թուրքիայի իրադրությանը ստուգապես իրագրել դառնալու համար այդ էլ լիովին բավական էր¹⁶: Նա սկզբում այցելեց Բագել և Ժնև՝ հայերի շվեյցարացի բարեկամներին փողեկացնելով իր մարտդրության մասին, այնուհետև Բուխարեստով մեկնեց Սոֆիա, որտեղ ՆՅԳ ղեկավարները նրան առար փողեկություններ պրամադրեցին Թուրքիայում կատարվող իրադարձությունների վերաբերյալ¹⁷: Այդ ամենին ծանոթանալուց հետո Լեփսիուսի համար արդեն պարզ դարձավ, որ ծայր էր առել հայ ժողովրդի ծրագրված բնաջնջումը, և որ այլևս անհնար էր շաբաթներ ի վեր կատարվածը եր շրջել: Նա միայն հույս էր փայփայում, որ իրեն փրկված փողեկությունները կարող էին չափազանցված լինել, և որ գոնե արևմտյան ու կենտրոնական վիլայեթների հայությանը հնարավոր կլիներ աքսորից եր պահել¹⁸:

Լեփսիուսը հուլիսի 24-ին հասավ Կ. Պոլիս և այնտեղ մնալով երեք շաբաթ՝ փորձեց ըստ հնարավորին մանրամասն փողեկություններ հայթայթել աքսորի ընթացքի և հետևանքների վերաբերյալ¹⁹: Չնայած գերմանական դեսպանությունում նրան հյուպատոսական փողեկագրերին ծանոթանալու հնարավորություն չգրվեց, այնուամենայնիվ դեսպանության աշխատակիցների բանավոր փողեկություններ²⁰, գավառներից եկած օրաբերկրացիների, երկրի ներսում մասնաճյուղեր ունեցող օրաբերկրյա կազմակերպությունների, եվրոպացի և ամերիկացի բարոզիչների պրամադրած նյութերի շնորհիվ նա բավական հստակ պատկերացում կազմեձեռական իրադարձությունների վերաբերյալ²¹: Այդ առումով մեծ նշանակություն ունեցան նաև նրա հանդիպումները հայոց Զավեն պարրիարի և բազմաթիվ այլ փողացի հայերի հետ, որոնք, հակառակ իրենց սպառնացող վրանգին, չվարանեցին կապ հաստատել Լեփսիուսի հետ²²: Մեծ ծառայություն մատուցեց նաև Կ. Պոլսի ամերիկյան դեսպան Մորգենթաուն, որը, շրջանցելով իր պաշտոնական իրավունքները, Լեփսիուսին հնարավորություն տվեց աչքի անցկացնել ամերիկյան հյուպատոսներից ստացված մեծաքանակ փողեկագրերը, այն, ինչ գերմանական դեսպանությունը հրաժարվել էր անել:

Լեփսիուսը փորձեց հանդիպում ունենալ նաև ռազմական նախարար Էնվերի հետ, ինչը նրան հաջողվեց օգոստոսի 10-ին²³: Էնվերի վրա մարդկայնորեն ներգործելու անհնարիությունը գիտակցելով հանդերձ՝ նա այնուամենայնիվ նախարարի հետ մեկժամյա զրույցի

15 Անդ, էջ 190:

16 Անդ, էջ VI:

17 Տե՛ս անդ, էջ VI-VII:

18 Տե՛ս J. Lepsius, Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, „Der Orient“ 1919, էջ 23:

19 Տե՛ս J. Lepsius, Der Todesgang..., էջ VIII:

20 Նապեկանչական է, որ Վանգենհայմը Լեփսիուսի այցի ողջ ժամանակամիջոցում «հիվանդության պարճառով»

Կ. Պոլսից բացակայում էր: Տե՛ս J. Lepsius, Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, էջ 23:

21 Անդ:

22 Լեփսիուսը մշտապես գրելով էր ոսրիկանների հսկողության փակ: Անդ, էջ 24:

23 Տե՛ս R. Schäfer, Geschichte..., էջ 89:

ընթացքում գործադրեց իր բոլոր հնարավորությունները բնաջնջվող ժողովրդին փրկելու համար: Ի պարսպան Թուրքիայի բարոյական վարկի կործանման վերաբերյալ Լեփսիուսի նախագգուշացմանը՝ նախարարը երկարաշունչ ճառերով փորձում էր հիմնավորել «պարերգմական իրավիճակի թելադրանքով հեղափոխական փարքերի դեմ» միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությունը: Այն հարցին, թե արդյոք ապացույցներ կա՞ն Կ. Պոլսի ձերբակալված հայ մարավորականների հակապետական գործունեության վերաբերյալ, հերքեց խուսափողական մի պարսպան. «Դա կարիքը մենք չունենք: Մենք ինքներս հեղափոխությամբ ենք եկել այսօր, և գիտենք, թե նման բաներն ինչպես են արվում»²⁴: Նմանապես անարդյունք էր նաև փոքրամասնության ապագայի վերաբերյալ արտահայտված մարտագոյությունը: «Ողջ Անաթոլիայում մեծ և փոքր առևտուրը գրեթե բացառապես հայերի ձեռքին է, ընդգծում էր Լեփսիուսը: Նրանք արևելյան մարզերում լավագույն հողագործներն են և ողջ Անաթոլիայում արհեստավորների դասը բաղկացած է գրեթե միայն նրանցից: Նայերը պետության սրամոքսն են: Դուք այն այժմ հանում եք և կարծում, թե մյուս անդամները՝ թուրքմենները, քրդերը, լազերը և չերքեզները կստանան նրա ֆունկցիաները: Դա մոլորություն է»: Էնվերն այդ անշուշտ չէր կարող չընդունել, սակայն այդ նրան չէր անհանգստացնում. «Կարող է՝ այդպես է: պարսպանեց նա: Մենք պարերգմից հետո թույլ սրամոքս կունենանք: Մենք կկազդուրվենք...»²⁵:

Ի վերջո նորից անդրադառնալով արտոյալ կանանց և երեխաների դրությանը՝ Լեփսիուսը խնդրեց իրեն հնարավորություն փալ մարդասիրական օգնություն կազմակերպելու նպատակով մեկնել գավառները: Էնվերն իհարկե նրա խնդրանքը մերժեց՝ իր հերթին կարարելով մի այլ առաջարկ. օգնության դրամը հանձնել իրեն և իրեն էլ վստահել այդ գործի կազմակերպումը: «Եթե ես թույլ փամ, որ օտարները հայերին օգնություն ցուցաբերեն, ի հիմնավորումն դրա նշում էր նա, - ապա նրանք չեն դադարի իրենց հույսը դնել օտարների միջամտության վրա, - ... Նայերը պետք է իրենց բարեգործներին փեսեն միայն մեր մեջ»²⁶:

Լեփսիուսն անշուշտ դրան համաձայնել չէր կարող՝ համոզված լինելով, որ դրամն այդ դեպքում հոսելու էր թուրք պաշտոնյաների գրպանը կամ ծառայելու էր այլ նպատակների: Իր առաքելությունը փեսնելով ձախողված՝ նա փորձեց փրկել մահապարտներից գոնե մեկին՝ Գերմանա-հայկական ընկերության հիմնադիր անդամ, բժշկագիտության և փիլիսոփայության դոկտոր Նայրանյանին, որը պարերգմից փոքր-ինչ առաջ Բեռլինից մեկնել էր Նայասպան և արտոյի օրերին ձերբակալվել: Էնվերը խոստացավ Նայրանյանի «գործին» ծանոթանալ և նրա դեմ ծանրակշիռ փաստարկների բացակայության դեպքում կարարել Լեփսիուսի խնդրանքը, այն է՝ Նայրանյանին ազատել և ուղարկել Գերմանիա: Վերջինս, սակայն, ինչպես առժամանակ հետո պարզվեց, բանփում սպանվել էր²⁷:

Ինչեւէ, Էնվերի հետ հանդիպումից հետո Լեփսիուսն այլևս Կ. Պոլսում անելիք չունեւ և վերադարձաւ՝ ճանապարհին Սոֆիայում դարձյալ հանդիպելով ՆՅԴ- գրասենյակի ներկայացուցիչներին, որոնք նրան փրամադրեցին նոր մեծաքանակ փողեկություններ վերջին

24 J. Lepsius, Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, „Der Orient“ 1919, էջ 26:

25 Անդ:

26 Անդ, էջ 27:

27 Տե՛ս անդ, էջ 28:

իրադարձությունների մասին²⁸: Սեպտեմբերի 18-ին հասնելով Բեռլին՝ նա համոզվեց, որ ԱԳՆ արդեն բավականաչափ փողոցային էր հայ ժողովրդի բնաջնջման՝ Թուրքիայում իրականացվող քաղաքականությանը, սակայն դիվանագիտական հորդորներից զատ այլ, ավելի կոշտ միջամտություն կարարելու մտադրություն չուներ: Զանգվածային աքսորը կասեցնելու համար Թուրքիայի վրա ուժգին ճնշում գործադրելու՝ Լեփսիուսի պահանջը նույնպես դրական արձագանք չգրավ: «Ինչ պետք է մենք անենք,- ի պարասխան նշում էր Յիմեր-մանը:- Թուրքիայի հեղհեղ միությունը պահպանվում է Թալեթի, Էնվերի և Խալիլի վեց ձեռքերի մեջ: Եթե այդ երեքը խելքի չեն գալիս, մեզ մնում է միայն հրաժարվել դաշինքից: Իսկ այդ մենք չենք կարող անել»²⁹:

Այն հարցին, թե այդ պեսակեպն իրականում արդյոք հիմնավորված էր, մենք կանդրադառնանք մի փոքր ուշ: Լեփսիուսին, այնուամենայնիվ, այլ բան չէր մնում անել, քան Գերմանիայում, որտեղ «մամուլն արտադրում էր միայն թուրքական սրահող պաշտոնական փողոցությունները», սրբաշնչ ճիշտ հասարակական կարծիք և փորձել նրա օգնությամբ ճնշում գործադրել քաղաքացիների վրա³⁰: Նա սեպտեմբերին մեկնեց Բազել ու Ժնև՝ հայ ժողովրդի շվեյցարացի բարեկամներին փողոցացնելու իր հեղափոխությունների արդյունքների մասին՝ նրանց պրամադրեց նաև իր մոտ գրվող փաստաթղթերի մի մասը³¹: «Basler Nachrichten» օրաթերթի սեպտեմբերի 16-ի համարում նա հրապարակեց նաև «Ժողովրդի բնաջնջումը» վերնագրով մի անսպորագիր հոդված³², որտեղ ամփոփ կերպով ներկայացնելով իր դիտարկումների արդյունքները, միաժամանակ փողոցացնում էր, որ գերմանական կառավարությունը այդ ամենին քաջափողոց է, մերժում է ոճրագործությունը, սակայն անգոր է դրանք արգելելու³³, Ինչպես փողոցացվում էր այդ առթիվ Բազելի գերմանական գլխավոր հյուպատոսի՝ Բեռլին ուղարկած հաղորդագրության մեջ, Լեփսիուսի հոդվածն այնպեղ ահռելի սենսացիա էր առաջացրել³⁴: Ավելին, քանի որ շվեյցարական թերթերը սրացվում էին նաև Գերմանիայում, հոդվածն այնպեղ նույնպես բազմաթիվ ընթերցողներ գրավ, և երբ գերմանական զանգվածային մամուլի հրապարակիչների կողմից կառավարությանը նշված հրապարակման վերաբերյալ դիրքորոշում ցուցաբերելու պահանջներ ուղղվեցին, վերջինիս համար սրբաշնչ բավական աննպաստ կացություն³⁵:

Բեռլինն այդ իրավիճակում հարկադրված էր ընդառաջել առաջադարձ մամուլի ղեկավարների հեղ փողոցարվական հանդիպում ունենալու՝ Լեփսիուսի ցանկությանը, և հոկտեմբերի 5-ին նա ռայխսպագի շենքում զանգվածային մամուլի ներկայացուցիչների առջև հանդես եկավ մի ընդարձակ գեկույցով³⁶: Ներկայացնելով արևմտահայության ողբերգական դրությունը՝ հոկտեմբերին իր ելույթում մեկ անգամ ևս սուր քննադատության ենթարկեց

28 Տե՛ս անդ, էջ 29:

29 J. Lepsius, Der Todesgang..., p. XXII.

30 Տե՛ս անդ, էջ XIX:

31 Տե՛ս J. Lepsius, Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, „Der Orient“ 1919, էջ 31:

32 Տե՛ս J. Lepsius, Der Todesgang..., չջ XXIV: Նմմր. K. Meyer, Armenien und die Schweiz, Bern 1974, էջ 106:

33 Տե՛ս U. Trumpener, Germany and the Ottoman Empire 1914-1918, Princeton 1968, էջ 221:

34 Տե՛ս անդ:

35 Տե՛ս U. Feigel, Das evangelische Deutschland und Armenien, Göttingen, 1989, էջ 214:

36 Տե՛ս J. Lepsius, Der Todesgang..., չջ XXIV: ԾԱՄԻ. Feigel U., Das evangelische Deutschland und Armenien, Göttingen, 1989, էջ 214:

գերմանական կառավարության անվճարականությունը՝ նշելով, որ հայ ազգաբնակչության բնաջնջմամբ վերանում էր նաև Գերմանիայի արևմտական և մշակութային ազդեցությունը Թուրքիայի վրա, և այդպիսով Գերմանիան իր սեփական մեղքով դառնում էր ոչ թե Թուրքիայի «պարոնը», ինչին նա իրականում արժանի էր, այլ նրա «ծառան»։ Ներկայումս, ըստ Լեփսիուսի, Գերմանիան իր իսկ արևմտաքաղաքական և մշակութային շահերից ելնելով՝ պետք է վճարեցներն հանդես գար ի պաշտպանություն հայ ժողովրդի։ Լեփսիուսը կոչ արեց նաև ձեռնպահ մնալ Թուրքիայի ներքին իրադրության վերաբերյալ «կեղծ և գունազարդված փրկելավարություն» հրապարակելուց, ինչը, նրա համոզմամբ էական կվնասեր Գերմանիայի բարոյական վարկը աշխարհում³⁷։

Չնայած ելույթն ունեցողիքների կողմից կրթոք բանավեճերի փողիք արվեց և ընդհանուր առմամբ հակասական գնահատանքների արժանացավ³⁸, այնուամենայնիվ կառավարությանն այնքան էր անհանգստացրել, որ հաջորդ օրը նույն շենքում կազմակերպվեց մի մեծ մամուլ ասուլիս, որտեղ ԱԳՆ հեկտորը Լեփսիուսի փոխակերպները որակում էր իբրև «չափազանցված», թուրքական միջոցառումները բնութագրում սոսկ որպես «Անարարի խառնակիչ գործունեության արձագանք» և հավաստիացնելով, որ գերմանական կառավարությունը ձգտում էր հայերի համար դիվանագիտական ճանապարհով հնարավոր ամեն բան անել՝ միախնդրական ընկերություններին կոչ էր անում Նայկական հարցի հովանավորչության գործիք չդառնալ³⁹։ «Նայկական կոտորածների մասին, - մասնավորապես նշվում էր լրագրողներին փոխած հրահանգում, - պետք է ասել հերքելով, Թուրքիայի հեր մեր բարեկամական հարաբերությունները նրանց ներքին գործերի պարզառով ոչ միայն չպետք է վրանգվեն, այլև ներկա ծանր պահին նույնիսկ չպետք է քննվեն։ Այդ իսկ պարզառով առժամանակ պետք է պարտավորություն համարել լռելը։ Ներագայում, եթե արարելիքի կողմից գերմանական մեղսակցության պարզառով ուղղակի մեղադրանքներ ի հայտ կգան, անհրաժեշտ կլինի հարցը մեծ զգուշությամբ և վերապահությամբ դիտարկել և պնդել, որ թուրքերը հայերի կողմից ուժգին գրգռվել էին»⁴⁰։

Լեփսիուսը, սակայն, որոշակիորեն իր նպատակին հասել էր, քանի որ նրա ելույթից հետո մամուլը Թուրքիայի ներքին իրադրության վերաբերյալ իր գնահատականներում դրսևորում էր նկատելի զսպվածություն⁴¹։

Ինչևէ, Լեփսիուսը վճռել էր Թուրքիայում քրիստոնյաների բնաջնջման քաղաքականության դեմ ակտիվ քայլեր ձեռնարկելու և արքայալիներին օգնություն ցուցաբերելու համար ներգրավել նաև Գերմանիայի ավերարարական եկեղեցին, ինչը, չնայած այլ հանգամանքներում, նա արդեն մի անգամ արել էր։ Այդ նպատակով նա հոկտեմբերի 15-ին Արևելքում գործող բոլոր միախնդրական ընկերություններին հրավիրեց Բեռլին՝ նրանց իրազեկելով իր ճանապարհորդության արդյունքների և ձեռք բերված նյութերի վերաբերյալ⁴²։

37 J. Lepsius, Mein Besuch in Konstantinopel Juli/Aug. 1915, „Der Orient“, 1919, էջ 31:

38 Տե՛ս U. Feigel, Das evangelische..., էջ 214:

39 Տե՛ս ակո, էջ 214-215:

40 H. Vierbücher, Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915, Hamburg, 1930, p. 78:

41 Տե՛ս այդ մասին իր Լեփսիուսի վկայությունը J. Lepsius, Der Todesgang..., էջ XXIV:

42 Տե՛ս R. Schäfer, Geschichte..., էջ 89:

Արդյունքում հավաքության մասնակիցները 50 ստորագրությամբ մի ընդարձակ ուղերձ հղեցին կանցլեր Բեթման Նոլվեգին, որպեսզի ամփոփ կերպով ներկայացնելով Նայասպանում քրեական իրադրությունը և իրենց մտահոգությունն արտահայտելով հայ ժողովրդի ողբերգական վիճակի ու հայկական հարցի առնչությամբ՝ նրանք կոչ էին անում ոչ թե «երևույթային», այլ «խսկական և ազդեցիկ միջոցառումներ» ձեռնարկել Միջազգային քաղաքականությունում գործող հարյուր հազարավոր կանանց և երեխաներին սովամահությունից կամ սպանողից փրկելու և դեռ չաթաքված հայերի քաղաքականությունը կանխելու նպատակով: Միաժամանակ կոչի հեղինակները խնդրում էին այլ երկրների քրիստոնյաներին նույնպես աղերայալներին օգնություն և պաշտպանություն ցուցաբերելու հնարավորություն ընձեռել⁴³: «Մեր ժողովրդի դիմադրունակության ուժը խիղճն է,- նշվում էր ուղերձում,- որով մենք բոլորս դիմում ենք Աստծուն մեր զենքի հաղթանակի համար: Այդ համերաշխությունը և բերկրանքը սպառնում է սասանվել, երբ հայրնի է դառնում, որ մեր այլահավասար դաշնակցի կողմից մեր հարյուր-հազարավոր հավաքակիցներ անհիմն և անիմաստ կերպով հեղափոխվում են, և որ մեր կողմից հնարավորը չի արվում նրանց փրկության համար»⁴⁴:

Լեփսիուսի դրամամբ հոկտեմբերի 29-ին Գերմանիայի կաթոլիկների համաժողովի կենտրոնական կոմիտեի՝ միսիաների հանձնաժողովի կողմից նույնպես մի համանման ուղերձ հղվեց Բ. Նոլվեգին⁴⁵: Վերջինիս՝ նոյեմբերի 12-ին հաջորդած պատասխանը, սակայն, իր ընդհանուր հավաստիացումներով առավել դիվանագիտական ժեստի քաղաքականություն էր թողնում: «Կայսերական կառավարությունը,- նշված էր այնպես,- ինչպես մինչև այժմ, նույնպես ապագայում միշտ իր առաջնագույն պարտականություններից մեկը կհամարի իր ազդեցությունը գործադրել, որպեսզի քրիստոնյա ժողովուրդներն իրենց հավասարի պարտաճառով չհեղափոխվեն: Գերմանացի քրիստոնյաները կարող են վստահ լինել, որ ես, այդ սկզբունքով առաջնորդվելով, կանեմ ինձանից կախված ամեն բան ձեր արտահայտած մտահոգություններն ու բաղձանքները նկատի առնելու համար: Կ. Պոլսի կայսերական դեսպանությանը ես քննակազմել եմ ձեր դիմումի բովանդակության մասին»⁴⁶:

Չնայած կանցլերի պատասխանը նշված հարցերի շուրջ կառավարության դիրքորոշման որևէ փոփոխություն չէր արձանագրում, այնուամենայնիվ Լեփսիուսը քննադատելի քաղաքական միջոցներ, ընդհակառակը, նա իր պարսպն էր համարում ըստ հնարավորին մեծացնել հասարակական ճնշումը՝ դա համարելով իշխանություններին ակտիվ քայլերի մղելու միակ գրավակները: Ուստի պատահական չէ, որ երբ զանգվածային լրատվության միջոցներն ու եկեղեցին արդեն բավականաչափ իրագրել էին Նայասպանում կատարվող իրադարձություններին, նա վճռեց իր քննությունները մարտնչի դարձնել լայն հասարակական շրջաններին: Այդ կերպ Լեփսիուսը մտադիր էր նաև թուրքական պաշտոնական լրատվության դեմ սրելով ուժեղ հակազդեցություն և բացի այդ ավերարանական համայնքներին դրդել հայ աթաղաքներին օգնելու նպատակով կատարելու մեծածավալ հանգանակություններ,

43 Stn „Deutschland und Armenien...“, էջ 187:

44 Անդ, էջ 186: Կոչը ստորագրողների թվում էին այնպիսի ականավոր գիտնականներ և գործիչներ, ինչպես օրինակ, Ա. Ֆոն Նառնակը, Գ. Նաուսլայթերը, Յուլիուս Ռիխտերը, Է. Շթիրը, Ֆրիդրիխ Լոֆսը, Ա. Վ. Շրայբերը և այլն:

45 Stn J. Lepsius, Der Todesgang..., էջ XXIV:

46 Deutschland und Armenien..., թ. 198:

որոնք «կհամապատասխանեին կարիքի մեծությանը»⁴⁷: Լեփսիուսը ջանում էր այդ գերխնդիրն իրագործել թե՛ ընդհարակյա ճանապարհներով և թե՛ բացահայտ լրավորության առկա հնարավորությունների օգտագործման միջոցով:

Նախ անդրադառնանք նրա բացահայտ քրեոկապական գործունեությանը, որ իրագործվում էր իր իսկ կողմից խմբագրվող՝ «Der Christliche Orient» ամսագրի միջոցով:

Պարբերականի՝ 1915 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների համարում նրա և իր աշխատակիցներից մեկի ստորագրությամբ հրապարակվեց մի օգնության կոչ, որտեղ բավական թափանցիկ վկայություն էր կատարվում Նայասարանում սրբազան իրադրության վերաբերյալ. «Մեր բարեկամներն այնքան... մեծ միջոցների կարիք ունեն քրեոկական հազարավոր արքայական կանանց և երեխաներին օգնելու համար, - նշվում էր այնպես, - որոնք անցնում են Ուրհայով: Մեր առաջադրանքները, նույնիսկ եթե դրանք ամենածայրահեղ կարիքի մեղմացման են վերաբերում, քրեոկական անգամ ավելի մեծ են, քան Արդու Նամիդի մեծ կոտորածից հետո: Արդյոք հնարավոր կլինի՞ դեռ կենդանի հայ քրիստոնյաների կյանքը պահպանել, գիտի միայն Աստված: Մեր պարզին է, սակայն, անել այն, ինչ կարող ենք»⁴⁸:

Այս հրապարակումը, որտեղ բարեկամներին կոչ էր արվում «մեծագույն ջանքեր գործադրել» օգնության միջոցների հայթայթման համար, դարձավ առաջին անգամ «Der Christliche Orient»-ում: Պարբերականի համար 1915 թ. արեղծվել էր չափազանց բարդ իրավիճակ: Տարվա առաջին համարի թողարկումից հետո այն թղթի դեֆիցիտի հետևանքով, որի բաշխումը կատարվում էր իշխանությունների կողմից, հարկադրված էր պաշտպանել երկու ամիսը մեկ անգամ, ինչը մեծ դժվարություններ էր հարուցում օպերատիվ լրավորության իրականացման համար: Մյուս կողմից, Լեփսիուսը հարկադրված էր պարբերականը հրապարակելիս ցուցաբերել մեծ զգոնություն գրաքննության կողմից նրա արգելումը բացառելու համար, քանի որ այդ դեպքում կվնասվեր նաև օգնության աշխատանքների քարոզչությունը: Ամենամեծ խոչընդոտը, սակայն, այն էր, որ Ուրհայից ուղարկվող թղթակցությունները ճանապարհին գրաքննության կողմից ստուգման և «սրբագրման» ենթարկվելով՝ քիչ էին հասնում հիմնովին կամ մեծ մասամբ անընթեռնելի (կտրարված կամ ջնջված) վիճակում: Դրա ցայտուն վկայություններից մեկն, օրինակ, Լեփսիուսի՝ Ուրհայում գտնվող աշխատակից Յակոբ Բյունցերի՝ 1915 թ. դեկտեմբերի 4-ի ներքոհիշյալ նամակն էր. «Նոսպիսի անձնակազմի համար այս անգամ ամառային արձակուրդներ չեղան: Այնուհետև եկավ նոյեմբերյան չար ամիսը, որի մասին ես այսպես հակիրճ ուզում եմ քրեոկացնել: (Ներքո քրեոկությունը գրաքննության կողմից հանվել է: Երկրորդ էջը շարունակվում է նախադասության կեսից)⁴⁹... հիվանդներ: Ո՞վ պետք է բժշկների բացակայության պարագայում աղքատներին հոգ տանի: Ո՞վ, եթե ոչ Ձերեբայր Յակոբը...»⁵⁰:

Եւ այնուհանդերձ, նույնիսկ այն նվազագույնը, որ հասնում էր քրեո, որոշ պարկերացում էր քրեոյի հայ ժողովրդի մեծ ողբերգության մասին: Զորքինակ. «...Վերջին առաքու-

47 J. Lepsius, Der Todesgang..., էջ XXVI:

48 St'u Hilferuf!, „Der Christliche Orient“, 1915, էջ 73:

49 Այդ միջանկյալ պարզաբանումը կատարված է խմբագրության կողմից:

50 St'u Nachrichten, Der Christliche Orient, 1916, էջ 3-4:

մից ես երկու օր 50 մարկի հաց եմ բաժանել անհայրենիքներին: Սովահարներն ինձ գրեթե կտոր-կտոր էին անում, այնպես որ ստիպված էի պաշտպանվել: Յանձ կույրերի կույր ղեկավարներին, որոնք հագարներին ներկեցին դժբախտության մեջ...»⁵¹: Եւ կամ «... Իմ կյանքի ամենածանր ամիսն է, որ իմ երեսուն է գտնվում: Այսպես ժամերիկյան միսիոներին համար չափազանց ծանր էր, եւ նրա նյարդերը դավաճանեցին ...»⁵²:

Ուշագրավ է, որ գրաքննությունից ըստ հնարավորին խուսափելու համար Լեփիսուսի «Գերմանական առաքելություն Արեւելքում» կազմակերպության՝ Ուրհայի աշխարհակիցները փորձում էին իրողությունները ներկայացնել ակնարկներով, հաճախ կիրառելով նաեւ գաղտնալեզվի մեթոդը: Օրինակ, գրելով «Նարյուրավոր քաղցածներ փախչում էին միսիայի հասարակությունը, ամենաաղքատների մեջ մեր բժշկական գործունեությունը ահեղի չափեր է ընդունում» նախադասությունը՝ հեղինակը նախապես հարկ էր համարում ընդգծել, որ Գերմանիայում գիտեն, թե ովքեր են «քաղցածները» եւ «ամենաաղքատները»⁵³: Այդ եւ նման թղթակցությունների հրապարակման ժամանակ խմբագրությունն իր հերթին ընթերցողներին խորհուրդ էր տալիս ճշմարտությունը որոնել «տողերի արանքում»⁵⁴:

Այնուամենայնիվ, պետք է ասել, որ թղթակցների տեղեկությունների աղճատմամբ պայմանավորված լրագրական դեֆիցիտը Լեփիսուսի կողմից պարբերաբար կատարվող պարզաբանումներով հասցվում էր նվազագույն չափերի, չնայած, իհարկե, այդ պարզաբանումները եւս հիմնականում պետք է փաստագրական բնույթ ունենային: Օրինակ, Քյունցլերի՝ նոյեմբերի 19-ի հիշյալ թղթակցությունը հրապարակելիս նա կից գրությամբ տեղեկացնում էր, որ Ուրհայի հայկական թաղամասը ավերված, իսկ քրիստոնյա ազգաբնակչության մեծագույն մասը սպանված կամ աքսորված էր⁵⁵: «Մեր ընթերցողները, նշում էր խմբագրականը մեկ այլ անգամ, - այս կցկտուր տեղեկություններից կարող են նկատել, որ հիմնական խնդիրը գրաքննության պարճառով միշտ հարկադրված շրջանցվում է: Չնայած մեր տեղեկություններն ավելի քան բավական են իրողությունների վերաբերյալ ամբողջական պարկերացում ունենալու համար, սակայն քանի որ գրաքննությունը թույլ չի տալիս դրանք հրապարակել, մեր բարեկամները ստիպված են համբերել, մինչեւ մենք այդ մասին ավելին կկարողանանք ասել: Մեր ընթերցողները կարող են համոզված լինել, որ եթե մենք նույնպես ստիպված ենք լուր, ապա անգործ չենք, եւ որ իրենց նվիրատվությունները երբեք այնքան անհրաժեշտ չեն եղել, որքան այժմ»⁵⁶:

Այնուամենայնիվ, եթե պարբերականը գրաքննության պարճառով չէր կարող տեղեկություններ հաղորդել աքսորի բնույթի եւ իրականացման եղանակների վերաբերյալ, ապա

51 Stn Aus Urfa, „Der Christliche Orient“, 1915, էջ 77: Այս տողերն ամենայն հավանականությամբ պատկանում են Ա. Յեպելին:

52 Stn Nachrichten, Der Christliche Orient, 1916, էջ 3: Այս հատվածը քաղվել է Քյունցլերի՝ 1915 թ. նոյեմբերի 19-ի նամակից: Խոսքը վերաբերում է Ուրհայում գտնվող ամերիկյան որբանոցի փնթրեն Լեպիսին, որ չկարողանալով տանել հայերի ողբերգությունը՝ ինքնասպան եղավ: Stn J. Künzler, Bericht über die letzte Arbeit des deutschen Missionshospitals in Urfa, 1919, էջ 27:

53 R. Schäfer, Geschichte..., էջ 88:

54 Stn Nachrichten, Der Christliche Orient, 1916, էջ 3: Նման J. Künzler, Berichte über das Notstandswerk in Urfa, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 119, ծանոթագրությունը:

55 Stn Nachrichten, Der Christliche Orient, 1916, էջ 3:

56 Անդ, էջ 4:

դրա ծավալը և հեղուկությունը ընթերցողներին անհայտ չմնացին: Այդ առումով հարկապես մեծ դեր խաղաց Լևիսիուսի «Նեոագում դեպի Սիրիա» հոդվածը, որ պատգարակեց պարբերականի 1915 թ. վերջին համարում: Թուրքիայի հայաբնակ բոլոր վիլայեթներում «Նայ ժողովրդի բնօրրանում», արդեն ոչ մի հայ չկար, քրեականացում էր Լևիսիուսը: Ուլքեր այլևս ճանապարհին չէին, գտնվում էին Դեր և Զորի և Մոսուլի միջև ընկած փաստարաններում: «Բացարձակապես միջոցներից զուրկ մի քանի հարյուր հազար մարդկանց մի մուրացկան ժողովուրդ, որի չորս հինգերորդը երեխաներ և կանայք են, ճամբարել է Միջագետքի անապատի եզրին, առանց իմանալու, թե ինչպես է ձմռանը գոյար ելելու: Թուրքիայի հայ ժողովուրդը դարձել է պարտերազմի զոհը»⁵⁷:

Փաստագրական քննարկությունը շարունակվեց նաև հետագայում: Եթե անգամ ընդունվեք, որ Թուրքիայի հայ բնակչության առավելագույնը մեկ երրորդը մահմեդականացման և փախուստի միջոցով կարողացել էր արքայից խուսափել, նշվում էր ԳԱԱ-ի վարչության 1916 թ. սկզբին հրապարակված կոչում, ապա շուրջ 1200 000. մարդ արքայվել էին: Նրանց մի մասը դեռ գտնվում էր ճանապարհներին, իսկ մոտ 600. 000-ը, որոնք պետք է հասած լինեին Միջագետքի անապատները, դադարապարկված էին այնպիսի քաղցից և հիվանդություններից մահանալու⁵⁸: Ընդգծելով, որ արևելյան գավառների բնակիչներից «արքայավայր են հասել միայն կանայք և երեխաները», և այդպիսով նաև համապատասխան կռահումների հնարավորություն ընձեռելով՝ վարչությունը կոչ էր անում համախմբել ջանքերը «աննկարագրելի զրկանքների» ենթարկված արքայալներին օգնելու համար:⁵⁹

Լևիսիուսը, սակայն, ձգտում էր ոչ միայն փաստերն արձանագրել, այլև պարզաբանել նրանց ներքին շարժառիթները. հանգամանք, որ նրա համոզմամբ ի վերջո հանգեցնում էր թուրք դաշնակցի վերաբերյալ գոյություն ունեցող փեսակերպերի վերանայման անհրաժեշտությանը: Եթե Թուրքիան, նշում էր Լևիսիուսը, մինչև պարտերազմն «ազգային» պետություն էր, ապա այժմ ձգտում էր «խլամի հիմքի վրա» վերակազմվել մի միասնական մահմեդական պետության: Դա բնականորեն հանգեցնում էր քրիստոնյա քաղաքների մեկուսացմանը, որոնք այնպիսի հանդիսանում էին երոսական մշակույթի հիմնական կրողը: Առավել վրանգված քրիստոնյա քաղաքի՝ հայերի պարագայում նշված մեկուսացումը կարարվեց համապարած քրեականացման և արքայի ճանապարհով: Ներկառար արքայի կազմակերպումն ուներ ոչ թե «սարապեղիական» դրդապարճառներ, ինչպես ներկայացվում էր թուրքական պաշտոնական լրատվության կողմից, այլ «ներքին քաղաքական»: Լևիսիուսի համոզմամբ, այդպիսով մեծ պատասխանատվություն էր ծանրանում Թուրքիայի դաշնակցի՝ քրիստոնյա Գերմանիայի վրա, որի պարզ պարզքն էր ամեն ջանք գործադրել «արքայի անմեղ զոհերին» փրկելու համար⁶⁰:

Լևիսիուսը մանրագնին և մեծ հերեռողականությամբ էր հերքում արքայի «սարապեղիական» շարժառիթներով պայմանավորող փեսակերպերը, քանի որ Թուրքիայի հակահայկական պրոպագանդան, որը մեծ շրջանառություն ուներ նաև Գերմանիայում,

57 Lepsius J., Die Wegführung nach Assyrien, „Der Christliche Orient“, 1915, էջ 90-91:

58 Stü Hilferuf zur Linderung unbeschreiblicher Not, „Der Christliche Orient“, 1916, էջ 1-2:

59 Անդ:

60 Lepsius J., Die Wegführung nach Assyrien, „Der Christliche Orient“, 1915, էջ 91:

հենվում էր այդ կեղծիքի վրա: Նա առնվազն անկողն էր համարում աքսորի հարցում Շապին Գարահիսարի և Վանի դիմադրության շահարկումները, քանի որ երկու դեպքում էս հայերի պայքարը զուր ինքնապաշտպանական նպատակներ ուներ, և բացի այդ առաջինը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ աքսորն արդեն սկսվել էր: Նմանապես անհիմն էին նաև հայերի դասավորության և դավաճանության վերաբերյալ փարածում ստացած տեսակետները. «Լքություն կամ դասավորության առանձին դեպքերը,- նշում էր նա,- որոնք բնականաբար ի հայտ են գալիս պարերազմի բոլոր օջախներում, իսկ Թուրքիայում ինչպես հայերի, նմանապես նաև արաբների, քրդերի և թուրքերի մեջ, ունեն մասնավոր և տեղական նշանակություն, որոնց պարճառով չի կարելի ողջ ազգին պարասխանարվություն վերագրել»: Բացի այդ, նշում էր Լեփսիուսը, փաստերը ցույց են տալիս, որ «հայերն ընդհանուր առմամբ արիաբար և հավատարմորեն են ծառայել թուրքական բանակում, ինչը 1915 թ. փետրվարին վկայել է նաև ռազմական նախարար Էնվեր փաշան»⁶¹:

Աքսորի ստրատեգիական անհրաժեշտությունը վկայակոչող թուրքական տեսակետների հերքմանը զուգահեռ՝ Լեփսիուսը միաժամանակ սուր քննադատության էր ենթարկում այն գերմանական լրատվամիջոցներին, որոնք կապկեղծվելով նշված տեսակետները՝ նպաստում էին հասարակայնության ապակողմնորոշմանը: Օրինակ, Շերիֆ փաշայի և նրա թուրք կուսակիցների կողմից կառավարության դեմ դեռ պարերազմից առաջ կազմակերպված հեղաշրջման փորձն, ըստ մի շարք գերմանական օրաթերթերի, կապված էր մի «մեծ հայկական դավադրության» հետ:⁶² «Wiener neue freie Presse», «Neues Stuttgarter Tagesblatt», «Leipziger Tagesblatt» և մյուս օրաթերթերում ազատ շրջանառություն էր կարարում նաև Կ. Պոլսից 1915 թ. հունիսին ստացված այն ստանդարտ տեղեկարվությունը, ըստ որի հայերը Վանի վիլայեթում «կտրորել էին» 150 000 մահմեդականների:⁶³ Գերմանական մամուլի հրապարակումներում այդ «փաստն» օգտագործվում էր նույնիսկ որպես յուր իմնավորում հայկական կոտորածների արդարացման համար. «Ովքեր հայկական կոտորածներից բողոքում են,- նշված էր, օրինակ, հրապարակումներից մեկում,- մոռանում են, որ դրանից առաջ, ինչպես ապացուցված է, 150. 000 մահմեդականներ դարձել են հայերի գոհը»⁶⁴:

Լեփսիուսը սուր քննադատությամբ էր անդրադառնում իրականությունը խեղաթյուրող այդ հրապարակումներին. «Մամուլում հաճույքով են ասում՝ «Ինչպես ապացուցված է», երբ այդ մասին փաստեր չունեն,- հայտարարում էր նա: - Այդ 150 000 կոտորվածների արձագանքը շարունակ դողանջում է գերմանական մամուլում: Ով նման կոտորածներ է հորինում, դրանք վերագրում դժբախտ հայերին, «ինչպես ապացուցվածից» է խոսում, երբ ոչինչ ապացուցված չէ, սրանովնում է նույն մեղքը, որը մենք մշտապես վերագրում ենք Անտանտայի մամուլին: ... Եթե որևէ մեկն ավելի լավ տեղեկացված չէ, քան մեր մամուլը, ավելի լավ է լռի»:⁶⁵

61 Անդ, 90:

62 Անդ, էջ 93:

63 Անդ, էջ 92:

64 Անդ:

65 Անդ, էջ 92-93:

Նապրկանշական է, որ Գերմանիայում նրա հրապարակումներից ալեկոծված հասարակական կարծիքը հանդարտեցնելու նպատակով թուրքական կառավարությունը 1916 թ. հրապարակեց մի «Կարմիր գիրք» այսպես կոչված՝ հայկական ապստամբությունների մասին, որն անշուշտ իր նպատակին կհասներ, եթե արժանի հակահարված չստանար: Եւ այն չուշացավ. Լեվիտան այդ առթիվ հրապարակեց ևս առաքեց մի գաղտնի թռուցիկ, որը կրում էր «Ի պարզաբանումն հայերի կարծեցյալ ապստամբությունների» վերնագիրը, և որտեղ ամբողջականորեն մերկացվում էին թուրքական հրապարակման կեղծիքներն ու նենգ միտումները⁶⁶: Կարճ ժամանակ անց, 1916 թ. նոյեմբերին նա որպես գաղտնի թռուցիկ վերահրապարակեց ևս առաքեց նաև փոքր-ինչ ավելի վաղ՝ սեպտեմբեր ամսին *Der Christliche Orient*-ում հրապարակված իր «Թուրքիայում օգնության գործի մասին» հոդվածը, որը մանրամասն փրկելություններ հաղորդելով փրկի ունեցած ռճրագործությունների ևս հայ արքայալիների ողբերգականորեն ծանր դրության մասին՝ օրգանապես լրացնում էր նախորդին: Թռուցիկները մեծ տպաքանակով առաքվելով գերմանական ամենաբազմազան հասարակական շրջաններին՝ հնարավորություն ընձեռեցին կանխելու այն թյուրիմացությունները, որ կարող էին առաջանալ թուրքական հրապարակման հեղուկներով:

Նախահայկական բարոգշության դեմ Լեվիտանի պայքարն ուղեկցվում էր նաև հայ ժողովրդի պատմական առաքելության, նրա մշակութային արժեքների և ազգային առանձնահատկությունների արժեւորմամբ ու վերագնահատմամբ՝ այդպիսով ստանալով նաև կրոնա-մշակութային և փնտրա-քաղաքական հիմնավորում: Այդ առումով առանձնակի հիշատակության է արժանի դր. Ներման Խրիստի «Նայերի փնտրեսական և մշակութային նշանակությունը» ընդարձակ հոդվածը, որը տպագրվեց «*Der Christliche Orient*» պարբերականի՝ 1916 թ. 7-9-րդ համարներում⁶⁷: Նոյնիսկ, որ երկար տարիներ բժշկական գործունեություն էր վարել ԳԱԱ-ի Ուռնայի մասնաճյուղում և լայն շփումներ ունեցել Արևելքի գրեթե բոլոր քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների հետ, այդ հրապարակմամբ նպատակ էր հետապնդում փաստել հայ ժողովրդի անփոխարինելի դերն ու նշանակությունը ողջ Արևելքի փնտրեսական և մշակութային զարգացման խնդրում. մի խնդիր, որ գերմանական պաշտոնական փրկելավորության կողմից բնութագրվում էր որպես Գերմանիայի հետպատերազմյան արևելյան քաղաքականության գլխավոր նպատակներից մեկը:

Եթե Գերմանիան իր առջև նպատակ էր դրել աջակցել Առաջավոր Ասիայի փնտրեսական զարգացմանն, ապա, ըստ հոդվածագրի, պետք է նախ պարզեր, թե այդ մեծ առաքելությունն իրականացնելիս Արևելքի ազգաբնակչության ո՞ր տարրի վրա կարող էր հենվել: Որքան էլ մեծ էին թուրք բնակչության հետ կապված հույսերը, այնուամենայնիվ հոդվածագրի համոզմամբ նրանք այդ հարցում Գերմանիային դաշնակից չէին կարող լինել. «Թուրքը որքան հմուտ է իրեն պատերազմում դրսևորում,-նշում էր նա,- այնքան անպիտան է, ըստ մեր արևմտյան ըմբռնումների, իր երկրի փնտրեսական վերակառուցման համար»⁶⁸:

66 Տե՛ս R. Schäfer, *Geschichte...*, էջ 94:

67 Տե՛ս H. Christ, *Die wirtschaftliche und kulturelle Bedeutung der Armenier*, „*Der Christliche Orient*“, 1916, էջ 35-44:

68 Անդ, էջ 37: Թուրքերն ի բնե թուրանական փափաստանային քոչվորներ էին, նշում էր Խրիստը, որոնց «բնական իղեայր» Թուրանն էր: Զարգացման երոպական ըմբռնումները նրանց մշտապես մնում էին խորթ և անհասկանալի: Բացի այդ, նրանք գորկ էին նաև այն մարավոր ներուժից, որ անհրաժեշտ էր Արևելքում

Այլ էր իրավիճակը հայերի պարագայում: Նայ ժողովրդի անցյալի և ներկայի թռուցիկ բնությունն անգամ, ըստ հողավաճառի, հնարավորություն էր ընձեռում կապարել կռահումներ նրա «երոպական նկարագրի», «հզոր ներուժի», առանձնահատուկ օժտվածության և քաղաքի մասին. «Նուագույն ինքնատիպ գրական լեզուն և դեռ չորրորդ հարյուրամյակի սկզբին Տրդատ թագավորի և Գրիգոր պապրիարքի օրոք ընդունված քրիստոնեությունը,- նշում էր նա,- վկայում են այդ ժողովրդի բարձր մտավոր ունակությունները, որը կազմավորվել է նախապարմական շրջանում հին խաղերի և հնդգերմանական եկվորների միախառնման միջոցով, և որի փոխարեն շատ ավելի երոպական է, քան արևելյան»⁶⁹: Այդ, Խրիստի համոզմամբ, ապացուցվել է դեռ միջնադարում ի դեմս հայերի և Բարբարոսայի ու խաչակիրների միջև սրբազան ամուր կապերի, փաստագրվում է նաև ներկայում ի դեմս այն բազմազան արդյունավետ շփումների, որ նրանք ունեն երոպացիների հետ:

Նիմանավորելով, որ Արևելքի զարգացման պարմական առաքելությունը կարող էր իրագործել միայն հայ ժողովուրդը՝ Խրիստն անազանգ էր հնչեցնում այն մեծ ողբերգության առնչությամբ, որ ապրել էր արևմտահայությունը, և որը դեռ շարունակվում էր՝ սպառնալով բնաջնջել նաև անապարներում կուրակված դեռ կենդանի հարյուր-հազարավորներին: Մի ողբերգություն, որի համար, ինչպես ցույց էր տալիս Նայկական հարցի պատմությունը, առաջին հերթին մեղավոր էր Եւրոպան... Քանի որ, ըստ հողավաճառի, այն ոչ այլ ինչ էր, քան Նայկական հարցի ամուր զարգացումների բնական հետևանքը⁷⁰:

Ն. Խրիստի համոզմամբ, սակայն, դեռ ուշ չէր կատարված սխալն ուղղելու և դադարաված ժողովրդին փրկելու համար: Նայերի «սրբապետական ազատագրումը» նա համարում էր սկզբնական և ամենաիրատեսական քայլը, ըստ որի Գերմանիայի միջամտությամբ հարկավոր էր կատարել «վիլայեթների մի նոր, հայերի պահանջներին համապատասխանող բաժանում»⁷¹ և հայ ժողովրդին տալ սրբապետական ինքնակառավարման հնարավորություն: Այդ հարցում Գերմանիան պետք է սրանձներ «առաջնորդի» դերը, նշում էր հողավաճառը, քանի որ այդ էին պահանջում նրա հետպատերազմյան շահերն Արևելքում: Այլապես, եթե հայ ժողովրդի բնաջնջումը չկասեցվեր, ապա նրա խորին համոզմամբ ոչ միայն Գերմանիայի սրբապետական ծրագրերը կձախողվեին, այլև Առաջավոր Ասիայի բոլոր երկրները կդադարապարսկվեին կործանման. «Եթե Գերմանիան իրոք մտադիր է Անատոլիայի համար մինչև Բաղդադ և Մեկկա արդյունավետ երկաթուղային ցանց կառուցել,- նշում էր Խրիստն իր եզրափակիչ խոսքում,- եթե նա կամենում է կիլիկյան հարթավայրում, Ադանայի մոտ արհեստական ոռոգում իրականացնել և եթե համարձակվի վերականգնել Միջագետքի ոռոգման հին համակարգը, որտեղից է ուզում ավելի լավ աշխատած ձեռք բերել, քան հայերն են, ինչպե՞ս կարող է առանց նրանց գործուն աջակցության այդ ամենը գլուխ բերել: Թուրքերը ապշած դիտելու են. Ալլահ թերիմ: Մինչդեռ հայերը ձեռք կմեկնեն և կշարունակեն, մինչև աշխարհները կավարսվին: Թե՛ն Աստուծո ձեռքը, ուրեմն, իրադար-

երոպական չափանիշներին համապատասխան զարգացում ապահովելու համար»: Անդ, էջ 37-38:

69 Անդ, էջ 35-36:

70 Անդ, էջ 43:

71 Նամիդի օրոք երկրի արևելյան վիլայեթներն այնպես էին սահմանագծվել, որ նրանցից ոչ մեկում հայերը մեծամասնություն չկազմեն: Խրիստն այդ բնութագրում էր որպես «երկրի բարգավաճման համար վնասակար, երբ ետևորյան համար խոչընդոտիչ միջոցառում»: Անդ:

ծություններն այնպես ղեկավարի, որ այդ նպատակն իրականացվի: Այլապես Առաջավոր Ասիայի համար բացարձակապես միևնույն է, թե պարերագմում վիճակախաղն ինչպես կավարվի: Քանի որ, այսպես թե այնպես, այդ երկրները կկործանվեն այն մարդկային ուժերի բացակայության պարճառով, որոնք կոչված են եւ ի վիճակի են նրանց վերակառուցման համար աշխարհելու»⁷²:

Լեւիսիոսի հիշյալ փողեկավարական գործունեությունը զգալիորեն արդյունավորվեց՝ նպաստելով բարեկամների թվի ընդլայնմանը եւ նույնիսկ այդ ծանր իրադրությունում ապահովելով զանազան շրջանների նյութական եւ, ըստ հանգամանքների, նաեւ քաղաքական աջակցությունը: Դրա վկայությունն էր, օրինակ, Խաղաղության կողմնակիցների գերմանական ընկերության՝ 1915 թ. նոյեմբերին Լայպցիգում կայացած գլխավոր ժողովը, որը փողեկացված լինելով Վալաստանում կարարվող իրադարձությունների մասին՝ իր համակրանքն ու համերաշխությունը արտահայտեց հայ ժողովրդին՝ պարբերաբար վերանայնելով կառավարությանն ուղղված մի ուղերձ, որտեղ վերջինիս կոչ էր արվում վրանգված հայությանը սատարելու համար իր ազդեցությունը գործադրել դաշնակից Թուրքիայի վրա⁷³: Դրա խոստում վկայությունը դարձավ նաեւ հայ ժողովրդի աքսորի եւ բնաջնջման վերաբերյալ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Կարլ Լիբկնիսի 1916 թ. հունվարի 11-ին ռայխստագում կարարած հարցապնդումը, որում նա վկայակոչում էր Լեւիսիոսի հաղորդած փողեկությունները, եւ որը, զգալի իրարանցում առաջացնելով խորհրդարանում, սակայն առանց սպառնիչ բավարարում ստանալու, խորհրդարանի նախագահի միջամտությամբ առկախվեց⁷⁴:

⁷² Անդ, էջ 44:

⁷³ Feigl U., Das evangelische..., էջ 227: Առաքումից առաջ, սակայն, ուղերձի հարցադրումը բավականին «թուլացվեց», քանի որ ժողովին ներկա գրավող ոսթիկանության ներկայացուցիչը հայտարարեց, որ սկզբնական բովանդակությամբ ուղերձի առաքումը չէր կարող թույլատրել: Անդ:

⁷⁴ Ռայխստագի արձանագրությունում այդ մասին կարարվել է հետևյալ սղագրությամբ. «Լիբկնիսի. - Պարոն ռայխսկանցլերին արդյոք հայտնի՞ է, որ այժմյան պարերագմի ժամանակ դաշնակից թուրքական կայսրությունում հայ բնակչությունը հարյուր-հազարներով իր բնականավայրերից փողեկահանվել եւ բնաջնջվել է: Դաշնակից թուրքական կառավարության մոտ ի՞նչ քայլեր է պարոն ռայխսկանցլերը ձեռնարկել պարզաճ հարուցում իրականացնելու, Թուրքիայում հայ բնակչության մնացորդի դրությունը մարդավայել դարձնելու եւ նման ոճրագործությունների կրկնումն արգելելու համար: Նախագահ. - Նարցմանը պարասխանելու համար խոսքը փրվում է ԱԳՆ քաղաքական բաժանմունքի ղեկավար, կայսերական դեսպանորդ պրն. դր. Ֆոն Շթումին: Ֆոն Շթում. - Պարոն ռայխսկանցլերին հայտնի է, որ Բ. Դուր որոշ ժամանակ առաջ մեր հակառակորդների խռովարար մեքենայություններից դրդված թուրքական կայսրության որոշակի քարածաշրջաններում հայ բնակչությանը փողեկահանել է եւ նրանց նոր բնակավայրեր է հարկացրել: Այդ միջոցառումների որոշակի այլազդեցությունների պարզառով գերմանական եւ թուրքական կառավարությունների միջեւ փրդի է ունենում մրքների փոխանակություն: Այլ մանրամասներ չեն կարող փողեկացվել: Լիբկնիսի. - Ես խոսք եմ խնդրում հարցումն ամբողջացնելու համար: (Աշխուժություն): Նախագահ. - Նարցումն ամբողջացնելու համար ձայն ունի պարոն պարգամավոր դր. Լիբկնիսի: Լիբկնիսի. - Պարոն ռայխսկանցլերին արդյոք հայտնի՞ է, որ պրոֆեսոր Լեւիսիոսը ուղղակիորեն խոսել է թուրքահայերի բնաջնջման մասին...: (Նախագահի զանգահարությունը: Նոքորը փորձում է շարունակել իր խոսքը: Բացականչություններ. «Լուրջումն, լուրջումն»): Նախագահ. - Պարոն պարգամավոր, դա մի նոր հարցում է, որը ես չեմ կարող թույլատրել»: Տե՛ս K. Liebknecht, Gesammelte Reden und Schriften, Bd. VIII, Berlin, 1966, էջ 438-439: Նարկանչական է, որ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան Լիբկնիսի ելույթից հետո շրապ նիստ գումարեց այդ հարցը քննարկելու համար, ինչը, սակայն, ընթացք չարացավ, քանի որ կուսակցության աջկենտրոնամեք ղեկավարությունը ելույթի հանդեպ ընդունեց քննադատական եւ դատապարտող դիրքորոշում: Տե՛ս «Վայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում». փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 529:

Ինչևէ, 1916 թ. սկզբին Լեփսիոսը ծրագրել էր Սիրիայում և Միջագետքում գտնվող՝ հայ աքաղաղներին օգնություն ցուցաբերելու նպատակով մի արշավախումբ ուղարկել Թուրքիա: Այդ նպատակով ԳԱԱ-ի կողմից կազմավորված դիմումը, սակայն, մինչև իսկ դեսպան Մեյերենիսի ակտիվ միջնորդությունից հետո հանդիպեց Բ. Դոան անվերապահ մերժմանը: «ԳԱԱ կողմից ծրագրված՝ օգնության արշավախմբի հարցը այսպեղ ներկայացվել է Բ. Դոանը, այդ առթիվ իր՝ ապրիլի 28-ի տեղեկագրում նշում էր դեսպանը: - Ընդ որում ես ընդգծել եմ, որ հիշյալ ընկերությունն այդ հարցում սոսկ մարդասիրական նպատակներ ունի... և բացի այդ, որ ընկերության անդամների թվում կան բազմաթիվ ազդեցիկ և հեղինակավոր անձինք, ինչպես և, վերջապես, որ պրն. Լեփսիոսն անցյալ տարի անձամբ եկել է այստեղ և, ի միջի այլոց, Էմվեր փաշայի հետ գրույցի միջոցով առիթ է ունեցել իրազեկվել Նայկական հարցի մասին: Բ. Դոանը պարասխանեց վճռական մերժմամբ, և այն էլ այն հիմնավորմամբ, թե թուրքական կառավարությունը չի կարող օտարների կողմից օգնության որևէ ակցիա թույլատրել, քանի որ այդպիսով արտերկրի հետ կապված՝ հայերի հույսերը կամրապնդվեն...»⁷⁵:

Այդպիսով մեկ անգամ ևս փաստվեց այն իրողությունը, որ հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ գերմանական կառավարության անտարբերության պայմաններում անհնար էր ոչ միայն հակազդել հայության ծրագրված բնաջնջման գործընթացին, այլև իրագործել արդյունավետ օգնության աշխատանքներ դեռ կենդանի աքաղաղներին փրկելու նպատակով: Լեփսիոսն ի նպաստ հայ ժողովրդի գերմանական կառավարությանն ակտիվ միջամտությունների մղելու միակ հուսալի ճանապարհը, ինչպես արդեն նշվել է, համարում էր հասարակական ճնշման ուժգնացումը: «Der Christliche Orient»-ը, սակայն, գրաքննության ճնշման պայմաններում հասարակության իրազեկման՝ նախանշված նպատակին ըստ հարկի ծառայել չէր կարող, ուստի պարահական չէ, որ նա վճռեց դիմել սրեղծված իրավիճակում ամենահամարձակ և ազդու միջոցին. այն է՝ իր հավաքած տեղեկություններն առանձին գրքով հրատարակել և առաքել Գերմանիայի ավերարանական քահանայություններին, ԳԱԱ-ի բարեկամներին ու մյուս՝ առավել ազդեցիկ հասարակական շրջաններին: Առաքումը պետք է կատարվեր գաղտնի, քանի որ այլապես կձախողվեր⁷⁶:

1915 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Լեփսիոսն իր հավաքարիմ աշխատակից Ռիխարդ Շեֆերի հետ միասին գրառված էր նյութերը հրատարակության նախապարտասրելու գործով⁷⁶: Երբ գիրքն արդեն պատրաստ էր, ի հայտ եկան նոր չկանխարեսված խոչընդոտներ, քանի որ ոչ մի հրատարակիչ չէր համարձակվում այն տպագրել: Ի վերջո, երկարատև և որոնումներից հետո այդ առաջադրանքը սրանձնեց քրիստոնյա-պապական լոգական «Der Reichsbote» պարբերականի հրատարակչությունը, և 1916 թ. գարնանն աշխատությունը՝ «Տեղեկագիր Թուրքիայում հայ ժողովրդի դրության մասին» վերնագրով 20.500 տպաքանակով պատրաստ էր առաքման⁷⁷: Միայնակ կարողանալով հայթայթել առաքման միջոցները՝ Լեփսիոսը ձեռնամուխ եղավ այդ գործին: Նրան ի թիվս այլ բարե-

⁷⁵ „Deutschland und Armenien...“, էջ 257-258:

⁷⁶ Տե՛ս **R. Schäfer**, Geschichte..., էջ 89:

⁷⁷ Տե՛ս **J. Lepsius**, Bericht über die Lage des Armenischen Volkes in der Türkei, Potsdam, 1916.

կամներին, օգնում էր նաև դր. Մարտին Նիպագեն⁷⁸: Գործն ըստ հնարավորին արագ ավարտելու համար Լեփսիուսը ներգրավել էր նույնիսկ իր երեխաներին. «Նախքան ոստիկանությունը կգար Նայասպանում կարարված սարսափելի իրադարձությունների մասին պարմող գիրքը բռնագրավելու,- հիշում էր Լեփսիուսի դուստր Վիլյան,- մենք սպիտակեղենի զամբյուղով լի բազմաթիվ փոքրիկ փաթեթներ փարանք փոստ, իսկ վերջում շատ փաթեթներ առանձին-առանձին ներկցինք Պոպսդամի փաթեթ փոստարկղերի մեջ»⁷⁹: Նույնիսկ ընթացքում աշխատության 20, 000 օրինակ ուղարկվեց Գերմանիայի քահանայական ծառայություններին և ԳԱԱ-ի բարեկամներին, իսկ ևս 500-ը Ռայխսպագի, Վյուրթեմբերգի երկրամասային պառլամենտի պարզամավորներին և գերմանական ամենահեղինակավոր թերթերի խմբագրություններին⁸⁰:

Լեփսիուսն այնպես էր հաշվարկել, որ Գերմանիայի բոլոր ավերարանական քահանայությունները սրանային աշխատությունը՝ «նրա միջոցով մի թուրքական սրահող հեռագրերով ամենուին չկաշառված կարծիք ձեռք բերելով փաստերի վերաբերյալ»⁸¹: Գրքի օրինակները փոստային փաթեթավորմամբ որպես փակ, գաղտնի առաքում ուղարկվում էին զանազան վստահված անձանց, որոնք իրենց հերթին համաձայն կից հանձնարարականի դրանք փարածում էին համայնքներում⁸²: Միայն Ռայխսպագի և Վյուրթեմբերգի 191 պարզամավորների համար կարարված առաքումը, թերևս, անհաջողությամբ պսակվեց, քանի որ օրինակները րեղ չհասնելով՝ բռնագրավվեցին⁸³: Բարեբախտաբար այդ դեպքը միակն էր, և Լեփսիուսն ըստ էության հասցրեց իրականացնել իր հանդուգն ձեռնարկը:

Երբ գրքի առաքումն արդեն ավարտվել էր, Լեփսիուսը, փաթեթ կողմերից նախագրուշացումներ սրանալով և միաժամանակ իր շաքարախարը բուժելու նպատակով՝ օգոստոսին մեկնեց Նոլանդիա⁸⁴: Նա այդ քայլին դիմեց նաև քաջ գիտակցելով, որ հայրենիքում այլևս չէր կարող հայ ժողովրդի համար ազատ գործել. «Իհարկե,- այդ առթիվ նշում էր Շեֆերը,- գրաքննությունն այնքան խիստ էր, որ Լեփսիուսին հարկադրաբար կլեցնեին և այդ կերպ կկարողանային նրան արգելել ժամանակին հանդես գալ հայ ժողովրդի համար: Այդ կանխելը և միաժամանակ հայրենիքին ծառայել կարողանալը անվիճելի հիմքեր էին նրա՝ Նոլանդիա մեկնելու համար»⁸⁵:

78 Տե՛ս **R. Schäfer**, Geschichte..., էջ 93: Մ. Նիպագեն մասնագիտությամբ ուսուցիչ էր և դասավանդում էր Նալեայի գերմանական դպրոցում, երբ սկսվեց հայերի փեղահանությունը: Չկարողանալով ողբերգությունները հանդուրժել և լռել, նա լքեց իր ծառայությունը և վերադարձավ Գերմանիա, որտեղ, սակայն, հակառակ իր բոլոր ջանքերի, ոչ ոքի մոտ ըմբռնում չգրավ: Ի վերջո նրան խորհուրդ տվեցին հանդիպել Լեփսիուսին: Վերջինիս առաջարկությամբ նա մի փեղեկագիր պարբերական էր ուղարկեց Ռայխսպագի պարզամավորներին: Չնայած այն հեղափոխություն բռնագրավվեց գրաքննության կողմից, այնուամենայնիվ մեծ փարածում գրավ, երկու անգամ վերահրապարակվեց հայերի դատնալով նաև Թուրքիայում, որտեղ կառավարությունը նրան մահվան դատապարտեց: Անդ, էջ 93-94: Տեղեկագրի բովանդակության վերաբերյալ մանրամասն իրազեկում ունենալու համար տե՛ս **M. Niepage**, Ein Wort an die berufenen Vertreter des deutschen Volkes, Potsdam, 1916: Նման. Niepage M., Eindrücke eines deutschen Oberlehrers aus der Türkei, Potsdam, 1919:

79 **U. Feigel**, Das evangelische..., էջ 221:

80 **J. Lepsius**, Der Todesgang..., էջ XXVII:

81 **J. Lepsius**, Was hat man den Armeniern getan?, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 115:

82 **R. Schäfer**, Geschichte..., էջ 93:

83 **J. Lepsius**, Der Todesgang..., էջ XXVII:

84 **J. Lepsius**, Persönliches, „Der Orient“, 1925, էջ 104:

85 **R. Schäfer**, Geschichte..., էջ 92: Դա հեղափոխություն անող զակիորեն հասարակում էր նաև Լեփսիուսը՝ նշելով, որ Նոլանդիայում նա կարողացել է «շատ կապեր ստեղծել», որոնք իրեն «հայրենիքում հասանելի չէին կարող

Գիրքն արդեն առաքված, իսկ հեղինակը արտասահմանում էր, երբ Թուրքիայի ղեկավարն այդ մասին տեղեկանալով՝ սեպտեմբերի 9-ին հանդես եկավ ԱԳՆ-ին ուղղված բողոքով: Իր դժգոհությունը հայտնելով այն առթիվ, որ «Նայկական հարցին վերաբերող ամենասարք բրոշյուրներից մեկը»՝ «ի կեղծ զրպարություններով», հնարավոր է եղել Գերմանիայում տարածել նա պահանջեց դրա դեմ միջոցառումներ ձեռնարկել և կասեցնել Լեփսիուսի հայանպասք «ազիպացիան»:⁸⁶ ԱԳՆ-ի պերպարատուարի տեղակալ Յիմերմանն ի պատասխան ղեկավարին տեղեկացրեց, որ աշխարհային օգոստոսի 7-ին բռնագրավվել էր: Քանի որ գիրքն արդեն հիմնականում առաքված էր, այդ բռնագրավումը փաստորեն վերաբերում էր միայն պարզամտություններին ուղարկված օրինակներին:

Լեփսիուսը Նոլանդիայում շարունակեց իր համակողմանի հայանվեր գործունեությունը՝ միաժամանակ Թուրքիայի իրադարձությունների վերաբերյալ իրագել հասարակական կարծիք ձևավորելու համար հանդես գալով բազմաթիվ, հիմնականում անստորագիր հրապարակումներով: Նա կարողացավ կապեր հաստատել այդ երկրի ազդեցիկ քաղաքական գործիչների հետ՝ նրանցից ևս մեծ աջակցություն ստանալով: Շուրջով Լեփսիուսի նախաձեռնությամբ այնպեղ հիմնվեց մի կազմակերպություն՝ Նայաստանի օգնության նիդեռլանդական կոմիտեն, որը հոլանդերեն լեզվով հրապարակեց նրա «Տեղեկագիրը», վարում էր եռանդուն հայանպասք բարոզություն և միաժամանակ գումարներ էր հանգանակում ևս առաքում Ուոհա, որպեղ դրանք Լեփսիուսի վաղեմի աշխարակիցների միջոցով ծառայեցվում էին արքայից հետո ի հայտ եկած հազարավոր որբերի և այրիների օգնության նպատակին⁸⁷: Նրա՝ Նոլանդիա մեկնելուց հետո Գերմանիայում բարեկամների հետ կապի պահպանումը ևս, ըստ հնարավորին, նաև հայօգնության աշխարանքների շարունակումը իրականացվում էին նրա հավատարիմ աշխարակից Ռիխարդ Շեֆերի միջոցով: Լեփսիուսը Նոլանդիայից կարողացավ կապ հաստատել Երոպայում գտնվող հայ նշանավոր գործիչների, մասնավորապես Պողոս Նուբար փաշայի և նրա աշխարակիցների, ինչպես և անգլիացի հայանվեր գործիչ, անգլո-հայկական ընկերության հիմնադիր լորդ Ջեյմս Բրայսի հետ: Վերջինս, ի դեպ, արդեն հրապարակել էր իր «Նապոյա» գիրքը, որ վերաբերում էր հայ ժողովրդի տեղահանությանը, և երկու երախտավոր այրերը կարողացան նաև նյութերի փոխանակություն կատարել⁸⁸:

լինել»: J. Lepsius, Persönliches, „Der Orient“, 1925, էջ 104:

86 Տե՛ս J. Lepsius, Der Todesgang..., էջ XXVII:

87 Տե՛ս J. Lepsius, In eigener Sache, „Mitteilungen aus der Arbeit...“, 1918, էջ 141:

88 Լեփսիուսը Նոլանդիայում գործում էր նաև գերմանական կառավարության համար՝ ԱԳՆ-ի ցուցումով պարբերաբար հավաքելով և Բեռլին ուղարկելով պարբերազմական իրադարձություններին և խաղաղության թեմային վերաբերող՝ անգլիական և հոլանդական մամուլում լույս տեսնող հրապարակումները, վարում էր գրական-աստվածաբանական գործունեություն և միաժամանակ Շեֆերի միջոցով կազմակերպում հայ աղերյալների օգնության աշխարանքները նաև Գերմանիայում: Ընդ որում, ԱԳՆ-ի համար կարարվող վերոնշյալ ծառայությունը գոյար եման հաստատում միջոցներից զրկված գործչին ոչ միայն կանոնավոր եկամուտ ապահովեց, որով նա կարողացավ իր բազմանդամ ընտանիքի ապրուստը հայթայթել, այլև հնարավորություն ընձեռեց բավականաչափ ազատություն վայելել պարբերազմի ընթացքում իր հայանվեր գործունեությունը Շեֆերի միջոցով Գերմանիայում ևս շարունակելու համար. հանգամանք, որ հաստատվում էր նաև Լեփսիուսի կողմից հեղադալում հրապարակված մի տեղեկության մեջ. «Ես Նոլանդիայում գործում էի որպես տեղեկավար՝ անգլիական և հոլանդական մամուլի վերաբերյալ լրատվություն ուղարկելով ԱԳՆ ռազմական ծառայությանը, նշում էր նա: - Այդ ծառայությունն ինձ հնարավորություն տվեց իմ գերմանացի աշխարակից Ռ. Շեֆերի օգնությամբ իմ հայկական օգնության գործը, գերազանցապես Ուոհայի իմ բարեկամների միջոցով, շարունակել

Միաժամանակ Լեփիսիոսը շարունակում էր հրապարակախոսի՝ իր բոլոր ջանքերը գործադրել գերմանական կառավարությանը հայոց ցեղասպանությունը կասեցնելու և դեռ կենդանի հայերին փրկելու նպատակով Թուրքիայի վրա կոշտ ճնշման մղելու համար, մինչդեռ պաշտոնական Գերմանիան դրան հակված չէր և ավելին, նման միջամտությունից իր հրաժարումը փորձում էր հիմնավորել Թուրքիայի հետ դաշինքի խզման վտանգով:

Նաթկ է նշել, որ դա ցեղասպանության նկատմամբ գերմանական կառավարող շրջանների որդեգրած չեզոք և հանդուրժողական դիրքորոշումն արդարացնելու՝ ամենահեղինակավոր «հիմնավորումն» էր: «Ես կարող եմ միայն ասել, որ մենք արել ենք ամեն բան, ինչ կարող էինք,- ռայխսպագի պարզամտությունների առջև իր՝ 1916 թ. սեպտեմբերի 29-ի ելույթում նշում էր ԱԳՆ պերպարատուար ֆոն Յագովը:- Ամենածայրահեղը, որ մեզ դեռ մնում էր, Թուրքիայի հետ դաշինքի խզումը կլիներ: ... Թուրքերը մեզ կարևոր ծառայություններ են մատուցում՝ պաշտպանելով մեր հարավ-արևելյան դիրքային թերը: Դուք ինձ հետ կհամաձայնեք, որ մենք չենք կարող այնքան հեռու գնալ, որ թուրքերի հետ, որոնց մենք Նայկական հարցի վերաբերյալ մեր փնտրական նախագծումներով խիստ անտրամադիր ենք դարձրել, նաև մեր դաշինքը խզենք»⁸⁹:

Եղևրական իրադարձությունները կասեցնելու հարցում պաշտոնական Գերմանիայի «անկարողության»՝ այդ և նման պարճառաբանությունները, սակայն, բնավ իրատեսական համարվել չէին կարող: Ինչպես վկայում էր արդեն հիշարակված՝ Էնվերի մայիսի 31-ի հեռագիրը, նա նույնպես լրջորեն հաշվի էր նստում այն հանգամանքի հետ, որ Գերմանիան կարող էր արգելել հայ ժողովրդի փրկահանումը, մինչդեռ դեսպանին ոչ այնքան փրկահանվող ժողովրդի ճակարագիրն էր մտաբերում, որքան Գերմանիայի դեմ այդ իրադարձությունների քաղաքական շահարկման հնարավորությունը: Եւ եթե նա հետագայում հանդես եկավ նաև Բ. դոսան ուղղված մի շարք ամուլ գգուշացումներով, ապա դրանք դարձյալ թելադրված էին գլխավորապես այդ շահարկումներին դիմակայելու մտաբերությամբ, հանգամանք, որ չէր խուսափում հաստատել նաև ինքը՝ դեսպանը: «Թուրքական ձեռնարկումներին մեղսակից լինելու առնչությամբ մեր թշնամիների կողմից հետագայում մեզ ուղղվելիք հավանական մեղադրանքներին հակազդելու համար,- նշում էր նա, օրինակ, 1915 թ. հուլիսի 7-ին կանցլերին ուղղված իր նամակում,- ես անհրաժեշտ եմ համարել Բ. դոսան ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ մենք հայ բնակչության աքսորին միայն այն չափով ենք հավանություն տալիս, եթե դրանք թելադրված են ռազմական նկատառումներով և ծառայում են ապստամբությունների կանխարգելմանը, և որ, սակայն, այդ միջոցառումների իրագործման ժամանակ աքսորյալներին անհրաժեշտ է պաշտպանել թալանից և կոտորածներից: Այդ հարցապնդումներին անհրաժեշտ շեշտադրում տալու համար ես դրանք կազմել եմ գրավոր հուշագրի ձևով, որը ես այս ամսի 4-ին անձամբ հանձնել եմ մեծ վեզիրին»⁹⁰:

Ուշագրավ է, որ Վանգենհայմը հարկ եղած դեպքում նույն նկատառումով էր հիմնավորում նաև երիտթուրքերի ոճրագործությունների վերաբերյալ պարմող նյութերի առաքումն

մինչև պարտազմի ավարտը»: J. Lepsius, Orient-Mission, „Der Orient“, 1924, էջ 34:

89 Տե՛ս P. Lanne, Armenien: Der erste Völkermord des 20. Jahrhunderts, München, 1977, էջ 146: Նման. Deutschland und Armenien..., էջ 294:

90 Տե՛ս „Revidierte Ausgabe...“, թիվ 106 արձանագրությունը:

ԱԳՆ՝ դրանք համարելով ապագայում Գերմանիայի մեղսակցության վերաբերյալ ի հայտ եկող մեղադրանքները հերքելու փաստարկներ: «Եթե ես վերջին շրջանում այդ իրադարձությունների մասին Ձերդ Գերագանցությանը ավելի մանրամասն եմ տեղեկացրել,- նշում էր նա Բեթման Նոլվեգին ուղղված իր՝ 1915 թ. հուլիսի 16-ի նամակում (կից առաքելով նաև փոխյուրապետ Կուկհոֆի՝ Մամսունի դեպքերի մասին պատմող տեղեկագիրը),- ապա դա տեղի է ունեցել փոխյուրապետ Կուկհոֆի կողմից նույնպես կարեւորված այն հանգամանքի հաշվառմով, որ մեր թշնամիները հեղափոխում մեզ դրանցում որոշակի մեղսակցություն կվերագրեն: Նրա տեղեկությունների հիման վրա մենք ի վիճակի կլինենք թշնամի աշխարհին, առանձնապես մամուլի միջոցով ցանկացած ժամանակ ապացուցել, որ մենք մշտապես դատապարտել ենք թուրքական կառավարության չափազանց հեռուն գնացող միջոցառումները եւ շար ավելի՝ նաև տեղական մարմինների անկարգությունները»⁹¹:

Ինչնէ, ինչպես ապացուցում են Վանգենհայմի վերոնշյալ տեղեկագրերը, նա անձնապես եւս միանգամայն անտարբեր էր հայ ժողովրդին վիճակված ողբերգությունների հանդեպ, եւ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դեսպանները, արտաքին քաղաքականության անմիջական իրադրժողները լինելուց զատ, որոշակի ներդրում ունեն նաև այդ քաղաքականության ձևավորման հարցում, ապա Վանգենհայմի պաշտոնավարությունը հայ ժողովրդի համար բախտորոշ այդ օրերին կարելի էր համարել ճակարագրի հերթական դաժան խաղ: Այդ անձնավորության ամենաուշագրավ գնահատականներից մեկը թերևս տվել է Ների Մորգենթաուն: «Նեց որ առաջին լուրերը Կոստանդնուպոլիս հասան,- գրում էր նա,- ինձ համար պարզ էր, որ հայերին օգնելու ամենաճիշդ ձևը ռճրագործությունների դադարեցումն էր, որը հնարավոր կլիներ բոլոր երկրների ներկայացուցիչների վճռով թուրքական կառավարությանը կոչ անելու դեպքում: Մարտ ամսի վերջին ես այցելեցի Վանգենհայմին: Մակայն ինձ պարզ դարձավ հայերի հանդեպ նրա արելությունը: Նա սկսեց հայերին ամեն առիթով դատապարտել: Նա, Էնվերի ու Թալեաթի նման, Վանի դեպքերի մեջ ապստամբություն էր տեսնում: Նրա կարծիքով հայերը միայն դավաճան մակաբույծներ էին: «Ես կօգնեմ սիռիսյաններին, բայց ինչ էլ որ լինի, հայերին չեմ օգնի,- ասաց նա»⁹²:

Իսկ այն, թե ինքը՝ Մորգենթաուն, որքան դատապարտելի էր համարում հայերի ճակարագրի հանդեպ գերմանական դեսպանի անտարբերությունը, վկայում էր նաև հետևյալ դրվագը, որով, ի դեպ, միաժամանակ պարզաբանվում են Վանգենհայմի հանկարծառանձնական հանգամանքները. 1915 թ. աշնանը նրանք մի հանդիպում ունեցան Կ. Պոլսի ամերիկյան դեսպանությունում, որի ժամանակ Մորգենթաուն հայերի կոտորածները կրքով կերպով բնութագրեց որպես «երկինք աղաղակող հանցագործություն»՝ դատապարտելով դրանց հանդեպ դեսպանի ցուցաբերած անտարբերությունը: «Երկին խօսեցանք քաղաքականություններում վրայ,- նշում էր Մորգենթաուն:- Գերմանիա արոնց պատրաստանալու է, ըստ Վանկենհայմ: Դուք կրնաք յախրեան պնդել ավտր վրայ, պատրաստանեցի, բայց ո՛չ մեկը չալիքի հաուարայ: Աշխարհ շարունակ պատրաստանալու պիտի նկարէ Գերմանիան. այդ

91 St'ն „Армянский вопрос...“, էջ 194-195:

92 H. Morgenthau, Ambassador Morgenthau's story, Garden-City-New York, 1918, թ. 370: Նմանք. Ա. Օհանջանյան, 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Երևան, 1997, էջ 215-216:

ոճիրներուն մեղքը մշտնջենապէս ձեր դատապարտութիւնը պիտի ըլլայ: ... Ես չեմ պնդեր, որ՝ Գերմանիա պատասխանաբար է այդ ջարդերուն՝ այն իմաստով, որ ինք եղած է անոնց դրդիչը: Բայց Գերմանիա պատասխանաբար է այն իմաստով որ՝ ինք կարող էր ջարդերը դադրեցնել և չգործածեց այդ ուժը: Եւ միայն Ամերիկա և ներկայի ձեր թշնամիները չեն, որ ձեզ պատասխանաբար պիտի բռնեն: Օր մը գերման ժողովուրդն է, որ ձեր կառավարութիւնը հաշիւի պիտի կանչէ: ... Այս փեսակ ոճիրներու աղաղակը մինչև և երկինք կը բարձրանայ...: Թիւրքիայի ներքին գործերու ներկայ վիճակին մէջ չպիտի միջամտեմ, պատասխանեց Վանկէնհայմ: Տեսայ որ՝ անօգուտ էր նիւթը անելի երկար ծեծել: Գորովանքէ և մարդկային գութէ գութէ մարդ մըն էր ան. զգուանքով երեսս անդին դարձուցի: Վանկէնհայմ ուրբի ելաւ մեկնելու: Յօդուրուն պէս՝ շունչը բռնուցաւ և յանկարծ ծունկերը կթոյնեցան: Յարկեցի և զինքը բռնեցի ճիշդ այն պահուն՝ երբ իյնալու վրայ էր: Պահ մը բռնուրովին շմռած մնաց, ցնորած կերպարանքով մը ինծի կը նայէր. յետոյ անմիջապէս ինքզինքը ժողվեձն իր հասարակշրութիւնը վերագրաւ: ... Երկու օր ետքը, ճաշասեղան նստելու արքն կաթուածի հարուած մը կունենայ: Վեր՝ իր անկողինը կտարուի, բայց ալ գիտակցութիւնը չի վերագրուեր: Նոկտեմբերի 24-ին, պաշտօնապէս ծանուցուցաւ ինծի, թէ Վանկէնհայմ մեռած էր: Վանկէնհայմէն իմ վերջին յիշատակս եղաւ ան, երբ դեսպանը ամերիկեան դեսպանատունի իմ գրասենեակս նստած, բացարձակապէս կը մերժէր որեւիցէ ազդեցութիւն բանեցնել՝ ազգի մը ջարդուիլը արգիլելու համար: Ինք այն միակ մարդն էր՝ որ կրնար դադրեցնել այդ ոճիրները, և իր կառավարութիւնը՝ այդ բանին կարող միակ կառավարութիւնը, բայց Վանկէնհայմ շար անգամներ ըսած էր ինծի. «Մեր միակ նպատակակէտն է այս պատերազմը շափել»⁹³:

Ինչևէ, մեծ խորագագացության կարիք չկա գիտակցելու համար, որ հիշյալ պարճառաբանություններն, ըստ որում՝ երկրորդների ոճրագործությունների արգելման նպատակով՝ Գերմանիայի կողմից կատարվող որևէ ազդու միջամություն կարող էր վրանգել թուրք-գերմանական դաշինքը, միանգամայն սնանկ էին: Այդ պարզորոշ վկայում էր նաև հաջորդ դեսպանը՝ կոմս Վոլֆ Մերենիխը, որը Կ. Պոլսում իր պաշտոնավարությունը սկսելով 1915 թ. նոյեմբերի 15-ից, ի փարբերություն իր նախորդի, փորձեց իր բոլոր հնարավորությունները գործադրել դեռ կենդանի աբադյալներին օգնելու և երկրորդների հայաստանի քաղաքականությունը կասեցնելու համար, չնայած այն արդեն թեւակոխել էր իր վերջին փուլը: «...Նաև մեր մամուլը պէտք է վրդովմունք արտահայտի հայերի հալածանքների հանդեպ և դադարի թուրքերին բռնել,- գրում էր նա 1915 թ. դեկտեմբերի 7-ին կանցլեր Բ. Նովկեյին ուղղված իր գեկուցագրում: - Այն, ինչ նրանք անում են (նկարի ունի Թուրքիայի ռազմական գործողությունները - Ա. Ն.), մեր գործն է, մեր սպաներն են, մեր հրանոթները, մեր դրամը: Առանց մեր օգնության այդ փրված գորպը կփռվի: Մենք ամենևին կարիք չունենք այդքան երկյուղած վերաբերվել թուրքերին: Նրանք հեշտությամբ չեն կարող անցնել մյուս կողմը և խաղաղություն կնքել: Անգլիական կառավարությունն այժմյան իշխանավորների հետ հեշտությամբ պայմանագիր չի կնքի: Այդ ավելի շուր հնարավոր կլինեք Ջեմալի հետ, եթե նա (ինչը բացառված չէ) Էնվերին դուրս մղեր: Անգլիական կառավարությունը փարիներ ի վեր

93 Մորգենթաուի և Վանկենհայմի ամբողջական գրույցը փնս Ն. Մորգենթաու , Ամերիկյան դեսպան Ների Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990, էջ 317-320: (Եթե նկարի առնենք, որ Վանկենհայմը մահացել է 1915 թ. հոկտեմբերի 23-ին, ապա այդ հանդիպումը փողի է ունեցել հոկտեմբերի 21-ին):

փորձում է Էնվերին քապալել: Չափազանց անհավանական է, որ նա այժմյան իշխանավորների հետ սեպարատիստ հաշտության ձգտի: Առավել ևս անհավանական է, որ նա Էնվեր փաշային օգտագործի ընդհանուր խաղաղության հաստատման փորձերում: Դրա համար նա ունի հարյուրավոր այլ բաց ճանապարհներ: Նայեցե՛ք հարցում հաջողություն ունենալու համար մենք պետք է թուրքական կառավարությանը սաքսափ ներշնչենք հերևանքների հանդեպ: Եթե մենք ռազմական նկարառումներից ելնելով՝ չհամարձակվենք ավելի վճռականորեն հանդես գալ, ապա մեզ այլ բան չի մնա, քան հետագա անարդյուն բողոքների հետ մեկտեղ, որոնք ավելի չարացնում են, քան օգուտ քալիս, դիպել, թե ինչպես է մեր դաշնակիցը շարունակում սպանողը»⁹⁴:

Գերմանաթուրքական դաշինքի լուծարման՝ վերոնշյալ պարզառաքանությունների սնանկությունը գործնականում իր փաստարկումը ստացավ նաև գեներալ Լիման ֆոն Սանդերսի միջոցով, որը 1916 թ. նոյեմբերին գերմանացի գործադրման սպառնալիքով թուրքական իշխանություններին արգելեց արքային Զմյուռնիայի հայությանը՝ դա հիմնավորելով հենց նույն ռազմաստիճանական նկարառումներով, որոնց քաղաքական շահարկմամբ երիտթուրքերն իրականացնում էին հայության արքային ու բնաջնջումը: «Նոյեմբերի 10-ի առավոտյան ես 5-րդ բանակի շտաբի պետին՝ գեդապետ Բյազիմ բեյին ուղարկեցի վալիի մոտ, - նշում էր այդ առթիվ գեներալը դեսպանությանն ուղղված փեդեկագրում, - ես կարգադրեցի նրան ասել, որ ես այլևս չեմ հանդուրժելու նման գանգվածային ձերբակալությունները եւ փոխադրումները, որոնք կատարվելով թշնամու սպառնալիքի փակ գործող մի քաղաքում՝ մուսթ էին գործում ռազմական փարածաշրջան, իսկ եթե, այնուամենայնիվ, ոստիկանությունն այդ միջոցառումները շարունակեր, ապա ես իմ ենթակայության փակ գործող գործառնների միջոցով դրանք արգելելու էի: Ես վալիին մինչև կեսօր ժամանակ փեդեի վճիռ կայացնելու համար: Զմյուռնիայում հրամանատարող գեներալ, պրոսական գեդապետ Թրոմերին, որն արդեն իրազեկ էր իրադրությանը, ես մայր Դրիդգեի միջոցով ծանուցեցի վերոնշյալի եւ անհրաժեշտության դեպքում ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Մոտավորապես կեսօրվա ժամը 1, 30-ին մայր Բյազիմ բեյը վալիի մոտից (որը Բուռնաբադում էր) վերադարձավ եւ ինձ հայտնեց, որ ձերբակալություններն ու փոխադրումները կանգնեցվել էին եւ այլևս փեդեի չէին ունենալու»⁹⁵:

Եթե միայն այդ բարձրաստիճան գինվորականը սեփական նախաձեռնությամբ կարողացավ դա անել, ապա որքան մեծ գործ կարող էր կատարել գերմանական կառավարության ազդեցիկ ճնշումը: Նախկին շահական է, ի դեպ, որ գեներալ-լեյտենանտ Լիման ֆոն Սանդերսը, որը մինչև Թուրքիա մեկնելը Կասելում գործող 22-րդ դիվիզիայի հրամանատարն էր, ժամանակակիցների վկայությամբ իր պաշտոնակիցների շրջանում ուներ մի կողմից կարգապահ, ինքնավար, ուղղամիտ, մյուս կողմից մանրախնդիր, մեծամիտ, անփական եւ ընդհանուր առմամբ դիվանագիտական վարվեցողության հմտություններից զուրկ անձնավորության համարում⁹⁶: Ուստի պարահական չէ, որ երբ նա ընդունելով Թուրքիայում գերմանական ռազմական միսիան ղեկավարելու վերաբերյալ 1913 թ. հունիսի 15-ին կայսեր կողմից կատարված

94 Տե՛ս «Revidierte Ausgabe...», թիվ 209 արձանագրությունը:

95 Տե՛ս «Deutschland und Armenien...», թիվ 307 արձանագրությունը: Այդ միջադեպի վերաբերյալ այլ փեդեկություններ ստանալու համար փեդ անդ, թիվ 306 արձանագրությունը: Նման. **H. Vierbücher**, Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915, Hamburg, 1930, էջ 75: Նման. **J. Lepsius**, Der Prozeß Teirir-Talaat, „Der Orient“, 1921, էջ 70:

96 Տե՛ս **M. Tamcke**, Armin T. Wegner und die Armenier, Hamburg, 1996, էջ 44:

առաջարկը՝ մեկնեց Թուրքիա, դեսպան Վանգենհայմն այդ փաստը ընդունեց մեծ անհանգստությամբ՝ վրդովված արձանագրելով, որ գինվորական միսիայի ղեկավարի պաշտոնի համար բոլոր հավանական թեկնածուների միջից ընտրվել է քաղաքականապես ամենաանպիտանը⁹⁷:

Ուշագրավ է նաև, որ Լ. ֆոն Սանդերսի նշանակումից հետո ինչպես դեսպանության, այնպես էլ Թուրքիայի ռազմական նախարարության հետ՝ ռազմական միսիայի փոխհարաբերություններում փեականորեն մեծ լարվածություն սրելով, եւ որ մասնավորապես վերջին իրողությունն առավելապես պայմանավորված էր Էնվերի եւ գեներալի փոխհարաբերություններում մշտապես առկա անձնական լարվածությամբ⁹⁸:

Իրադրությունը «շփեկու» նպատակով Վանգենհայմը ձգտում էր Լ. ֆոն Սանդերսին փոխարինել ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլթցի միջոցով, որը դեռ նախկինում 1883-1895 թվականներին որպես ռազմական կրթության կազմակերպիչ լայն գործունեություն էր ծավալել Թուրքիայում 1885-ից սրանձնելով նաև Օսմանյան կայսրությունում Գերմանիայի ռազմական միսիայի ղեկավարի պարտականությունները, իսկ 1896-ին որպես թուրքական մարշալ վերադառնալով Գերմանիա՝ նա հետագայում կայսրի կողմից ստացել էր ֆելդմարշալի փափոքս եւ 1909-1913 թվականներին դարձյալ բազմիցս մեկնել էր Թուրքիա այդ երկրի ռազմական պարտավորությունն ամրապնդելու նպատակով: Դեսպանի ջանքերը հաջողությամբ պսակվեցին, եւ 72-ամյա ֆոն դեր Գոլթցը, որն այդ ժամանակ գլխավոր նահանգապետի պարտականություններն էր կատարում Բելգիայում, 1914 թ. դեկտեմբերին մեկնեց Կ. Պոլիս: Քանի որ, սակայն, դեսպանն անկարող էր ռազմական միսիայի գործող ղեկավարին՝ Լ. ֆոն Սանդերսին պաշտոնանկ անել, նա ձգտում էր հնարավորին չափ սահմանափակել նրա ազդեցության ոլորտները, եւ պարահական չէ, որ ֆոն դեր Գոլթցը, որը դեկտեմբերի 12-ին արդեն Թուրքիայում էր, առանց ռազմական միսիայի ենթակայության դրվելու 1915 թ. փետրվարին նշանակվեց թուրքական ռազմական գլխավոր շտաբի խորհրդական եւ բացի այդ, ապրիլին սրանձնեց 1-ին, իսկ աշնանը 6-րդ բանակի, ներառյալ նաև Պարսկաստանում ու Աֆղանստանում փեղակայված գերմանական զինված ուժերի գլխավոր հրամանատարի պարտականությունները⁹⁹:

Թուրքական ազդեցությունը ֆելդմարշալի վրա, այնուամենայնիվ, այն աստիճան ակնհայտ էր, որ, ինչպես վկայում էին ժամանակակիցները, առժամանակ անց նրա հանդեպ անվստահություն առաջացավ նույնիսկ Կ. Պոլսի գերմանական ղեկավար շրջաններում, որքանով նա ձեռք էր բերել «թուրքացած» անձի համարում. «Ծեր գորավարին,- նշում էր Ն. ֆոն Կիսլինգը,- առաջին հերթին այն բանի համար էին պախարակում, որ նա կատարելապես թուրքացել էր եւ չէր կարողանում թուրքական ընչաքաղցության հանդեպ գերմանական շահերը պաշտպանել»¹⁰⁰:

Այդ անվստահության հետևանքով հաճախակի գերմանացի զինվորականներ էին ուղարկվում Բաղդադ՝ նրա մասին փեղեկագրեր պարբերաբար համար, եւ բացի այդ, որ-

97 Տե՛ս **J. L. Wallach**, *Anatomie einer Militärhilfe – die preussisch-deutschen Militärmissionen in der Türkei 1835-1939*, Düsseldorf, 1979, էջ 137:

98 **M. Tamcke**, *Armin T. Wegner...*, էջ 45:

99 Տե՛ս **H. von Kiefling**, *Mit Generalfeldmarschall von der Goltz Pascha in Mesopotamien und Persien*, Leipzig, 1922, էջ 16, 18-20: Նմմ. **M. Tamcke**, *Armin T. Wegner...*, էջ 46:

100 Տե՛ս **H. von Kiefling**, *առաջ*, էջ 109:

պես գերմանական շարքի պես նրան կցվեց նաև գեներալ մայոր Գերոլդ Ֆոն Գլայխը, որի պեսակները հասարակական կյանքում էին վերոնշյալը: «Գերմանական բարձրագույն զինվորական հրամանադատությունն այն պեսակներն էր,- գրում էր նա,- որ թուրքերի ազդեցությունը ֆելդմարշալի վրա ավելի մեծացել, քան նվազել էր: Իմ հեղափոխական պայքարողությունները արդև ու արդը հասարակական այդ կարծիքը»¹⁰¹:

Եթե ֆելդմարշալին թուրքական ազդեցություն էր վերագրվում նույնիսկ Գերմանիայի շահերը պաշտպանելու հարցում, ապա որքան մեծ պեսք է լինել այդ ազդեցությունը հայ ժողովրդին վերաբերող խնդիրներում: Այս ամենը նկատի առնելիս կարող է հասկանալի լինել, որ, ինչպես 1918-ին արեղեկացնում էր «Deutsch-Armenische Korrespondenz»-ը, ֆոն դեր Գուլթը նույնիսկ կողմնակից է եղել հայ ժողովրդի արեղահանման ծրագրին¹⁰², ակնհայտորեն, առանց իրագրել լինելու երիտթուրքերի բուն դիպրավորություններին: Եւ եթե ֆելդմարշալը ընդհուպ իր սեփական հրաժարականի հեռանկարով 1915 թ. դեկտեմբերին կարողացավ կանխել Մոսուլի, ինչպես եւ այնպեղ գրավող Բաղդադի հայերի արեղահանությունը, այնուամենայնիվ դա շար էր գիջում նրան, ինչ կարող էր արվել: Ի դեպ, վերոնշյալը փոքրինչ ավելի հանգամանակից ներկայացնելու համար հարկ է նշել, որ երբ 1915 թ. դեկտեմբերին որոշում կայացվեց Մոսուլում գրավող հայերին դեպի Եփրատ ուղարկելու մասին, ֆոն դեր Գուլթը «ռազմական արեղահանության այդ ամեննեին չարդարացված միջոցառման» հարցում ընդդիմացավ արեղական իշխանություններին: «Խնդիրը ձգվեց համարյա մի ամբողջ ամիս,- նշում էր ժամանակակիցը,- եւ ֆելդմարշալը սկզբում կարողացավ հասնել միայն այն բանին, որ հայերը Մոսուլում առժամանակ այլ ցուցումի սպասեին: Երբ մինչեւ հունվարի կեսը Կ. Պոլսից ոչ մի ցուցում չեկավ, ֆելդմարշալը, ելնելով իր գլխավոր հրամանադատի իրավունքներից, Մոսուլի վալիին արգելեց հայերին արեղահանել: Վալին նորից այդ մասին արեղեկություն ուղարկեց Կ. Պոլիս: Մինչեւ հունվարի 27-ը պարասխան չարացվեց: Ապա մի արեղեկություն եկավ այն մասին, որ կառավարությունը շարունակում է պնդել արեղահանման անհրաժեշտությունը: Դրանից հետո ֆելդմարշալը հեռագրով անմիջապես հրաժարական ներկայացրեց: Միայն այդ ժամանակ Էնվեր փաշան մի գաղտնի հեռագրով պարասխանեց, որպեղ հավաստիացնում էր, որ Մոսուլի հայերը կմնան այնպեղ, եւ ի միջի այլոց, սակայն, ֆելդմարշալին հայրնում էր, որ նրա՝ գերագույն հրամանադատի լիազորությունները նրան իրավունք չեն ընձեռում միջամտել թուրքական կայսրության ներքին գործերին»¹⁰³:

Էնվերի այդ նախազգուշացումն, իհարկե, միանգամայն անհիմն էր, քանի որ, եթե նկատի առնենք, որ հայ ժողովրդի արեղահանման ծրագիրը երիտթուրքական կառավարողների կողմից պարճառաբանվում էր բացառապես ռազմասրբարեղիական պարավակներով, ապա կասկած չի կարող հարուցել, որ Թուրքիայում գրավող գերմանական բարձրասրբիճան զինվորականությունը, նույնիսկ Թուրքիայի ներքին գործերին չմիջամտելու՝ գերմանական կառավարության որդեգրած միանշանակ դիրքորոշման դեպքում ռազմասրբարեղիական նկարառումներով ամեննեին չարդարացվող այդ ծրագիրը մեծ մասամբ կամ

101 Տե՛ս **G. von Gleich**, Vom Balkan nach Bagdad, Berlin, 1921, էջ 73:

102 Տե՛ս **Ա. Օհանյանյան**, 1915 թվական. Անհերքելի վկայություններ..., էջ 222:

103 „Deutschland und Armenien...“, թիվ 224 արձանագրությունը: Ֆոն դեր Գուլթը, ի դեպ, հիվանդանալով բժավոր արիֆով, մահացել է Կոսթ էլ Ամարայի մոտ, 1916 թ. ապրիլի 19-ին: Նիվանդության շրջանում, մասնավորապես ապրիլի 8-15-ը ընկած ժամանակամիջոցում նրան խնամել է նաև Արմին Վեգները:

ամբողջովին արգելելու՝ բոլոր հնարավորություններն ունենալով, և պատահական չէ, որ ինչպես Ֆոն դեր Գոլթը Մոստվի, այնպես էլ Լիման Ֆոն Սանդերսը Զմյուռնիայի հայերի աքսորման վերոհիշյալ արգելքները հիմնավորում էին հենց ռազմաստրատեգիական նկատառումներով: Երիտթուրքական հիշյալ պարճառաբանությունների սնանկությունն իր փաստարկումն ըստ հարկի ստացել է նաև գերմանական մի շարք հյուպատոսների և այլ դիվանագետների կողմից, որոնք հանգամանալից ներկայացնելով եղերական իրադարձությունների բնույթը, ծրագրայնությունը, ընթացքն ու հրեշավոր ենթատեքստը և հերքելով հայ ժողովրդի փրկահանման սպրտաբեկական «հիմնավորումները»՝ հաճախ նաև իրենց անթաքույց անհամաձայնությունն էին արտահայտում ոճրագործությունների նկատմամբ Գերմանիայի ցուցաբերած անսպասելիության և իրողությունները կոծկելու՝ գերմանական մամուլի որդեգրած քաղաքականության հանդեպ: «Իմ մինչայժմյան հեռագրային և գրավոր փրկելավորությամբ, նշում էր, օրինակ, Նալեայի հյուպատոս Ռոսլերը կանցյերին ուղղված՝ 1915 թ. հուլիսի 27-ի իր փրկելագրում, կարելի է փաստարկված համարել, որ թուրքական կառավարությունը փաստացի և հնարավոր հայկական խարդավանքների դեմ հիմնավորված պաշտպանական միջոցառումների սահմաններն էապես խախտել է և ավելի շուտ իր կարգադրություններով, որոնց իրագործումը, նաև կանանց ու երեխաների դեմ, նա ամենախիստ և ամենադաժան ձևով պարտավորեցրել է իշխանություններին, գիտակցաբար նպատակադրել է հայ ժողովրդի հնարավորին չափ մեծ զանգվածների այնպիսի միջոցներով բնաջնջելու, որոնք փոխ են առնված հնադարից, սակայն անպարվաբեր են մի կառավարության համար, որն ուզում է դաշնակցած լինել Գերմանիայի հետ: Կասկած լինել չի կարող, որ նա մտադրվել է քառյակի հետ պարերազմի մեջ գրկվելու առիթն օգտագործել հնարավորին չափ բիչ փակ հայ համայնքներ թողնելու միջոցով սպազայում Նալեական հարցից ազատվելու համար: Նա փոքրաթիվ մեղավորների հետ գոհարել է անմեղների բազմությունները: ...Թուրքական կառավարությունն իր միանգամայն անմեղ հայ հպարակներին պարերազմի գոյուց հեռացնելու անհրաժեշտության պարզակալով հազարներով և տասնյակ հազարներով բռնել է անապար, բացառություն չանելով ոչ հիվանդների, ոչ երեխաների և ոչ էլ գորակոչված զինվորների ընդհանրության համար... ոչինչ չի ձեռնարկել նրանց մեջ բռնկված համաճարակների դեմ, կանանց այնպիսի գրկանքների և հուսահատության մեջ է նետել, որ նրանք իրենց ծծկեր և նորածին երեխաներին նետել են ճանապարհի վրա, իրենց՝ հասունության մոտեցող աղջիկներին վաճառել են, իսկ շարերն էլ իրենց փոքրիկ երեխաների հետ նետվել գետը: Նա նրանց մարմն է ուղեկցող գորախմբի կամայականություններին և այդպիսով անարգանքների ու անպարվության, մի գորախմբի, որը փրկացել է աղջիկներին և վաճառել նրանց: Նա նրանց նետել է բեղվիների ձեռքը, որոնք նրանց կողոպտել և առ ետանգել են: Նա մեկուսի վայրերում անօրինաբար ոչնչացրել է փղամարդկանց և իր գոհերի դիերը կեր դարձրել շներին ու գիշարիչ թռչուններին: Նա իբրև թե «աքսորավայր» ուղարկված պարզամտներին սպանել է, բանտերից ազատել է կալանավորներին, հագցրել նրանց զինվորի համազգեստ և ուղարկել այն վայրերը, որտեղով պարբ է անցնելին աքսորյալները: Նա հավաքագրել է չերքեզ կամավորների և նրանց ուղղել հայերի վրա ... Նուրավոր չէ՞ր գեթ այսօր կասեցնել հետագա սարսափները և գոնե փրկել Նալեայի վիլայեթի ծովափնյա քաղաքների հայերին, որոնց աքսորումը դեռ

առջևում է: ... Մի՞թե Բեյլանը, Սուլլուկը, Քեսաբը և մյուս շրջանները պարերագմական գոյի են: Մի՞թե այնպեղ կանանց և երեխաների ներկայությունը վրանգավոր է, չէ՞ որ բոլոր փղամարդիկ գորակոչվել են...»¹⁰⁴:

Արևմտահայության բնաջնջման լերիպրորթական ծրագրի հիմնական մասը, փաստորեն, իրագործվեց աշխարհամարտի «բարենպաստ» իրադրության «ամենաբարենպաստ» շրջանում, երբ Թուրքիայում գերմանական բարձրագույն դիվանագիտական ներկայացուցչությունն ի դեմս Վանգենհայմի, այդ ծրագրին հակադրելու՝ գեթ անձնական նպատակամղվածություն չուներ, իսկ առավել ազդեցիկ զինվորական ղեկավարությունը ի դեմս Ֆոն դեր Գուլթցի, կոշտ հակադրման համար բավականաչափ ինքնուրույն չէր: Եւ դա այն աստիճան միանշանակ էր, որ մինչև իսկ հյուպատոսների և այլ դիվանագետների բազմաթիվ անհազանգերը ոչինչ չկարողացան փոխել: Չնայած հաջորդ դեսպանը՝ Վ. Մերենտիխն, ի փարբերություն Վանգենհայմի, վճռականորեն հանդես եկավ ոճրագործությունների դեմ՝ փորձելով համապատասխան դիրքորոշում ձևավորել նաև կառավարության մոտ, այնուամենայնիվ հայ ժողովրդի փրկահանման և բնաջնջման գործընթացն արդեն հիմնականում ավարտվել էր, և նրա միջամտություններն, այլևս անկարող լինելով կասեցնել իրենց անպարժելիության համոզումը ստացած լերիպրորթների քաղաքականությունը, պարճառ դարձան Բ. Դռան հետևողական փոխադարձությունների վարչարարման, որի հետևանքով, թուրքական կողմից գերմանական կառավարությանն ուղղված բողոքների հիման վրա նա երբ կանչվեց: «Թուրքիայի հանդեպ Մերենտիխը սկզբից ևուրժակի համակրանք չդրսևորեց, - գրում էր Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպանության կցորդ Յոզեֆ Պոմյանկովսկին, - և առավել քննադատական դիրքորոշում ընդունեց: Նրա համար խիստ անհաճ էր լռությամբ հանդուրժել հայերի բնաջնջման թուրքական ծրագիրը: Ի նպաստ հայկական նախնիների գոհերի նրա՝ բազմիցս կատարվող միջամտությունները, սակայն, հաջողության չհասան և այնպես պոպոռեցին նրա հարաբերությունները թուրքական կառավարության հետ, որ արդեն 1916 թ. ամռանը նրա համագործակցությունը Բ. Դռան հետ դարձավ անհնար: Կ. Պոլսի գերմանական շրջանները նույնպես գոհ չէին Մերենտիխից և ձգտում էին գաղտնի գեկուցագրերով թուլացնել նրա դիրքերը Բեռլինում, ինչը կարճ ժամանակում լիովին հաջողվեց: 1916 թ. սեպտեմբերին Էնվերը պաշտոնապես պահանջեց երբ կանչել կոմս Մերենտիխին, որը և ի կատար ածվեց: Նոյեմբերի 3-ին Մերենտիխը մեկնեց...»¹⁰⁵:

Ինչևէ, չնայած պարերագմի ողջ ժամանակամիջոցում պաշտոնական Գերմանիան համառորեն հրաժարվում էր ի նպաստ հայերի Թուրքիայի վրա ճնշում գործադրել՝ դա պարճառաբանելով Թուրքիայի հետ դաշինքի խզման վրանգով, սակայն այդ պարճառաբանությունն, ինչպես րեսանք, ամենևին հիմնավորված չէր: Չնայած դր. Յոհ. Լեվիսիուսին նույնպես չհաջողվեց Գերմանիային մղել արմատական հայանպաստ միջամտության, այնուհանդերձ նա կարողացավ գերմանական ու երոպական հասարակական շրջաններին իրազեկել եղերական իրադարձությունների մասին և ձեռք բերել նրանց աջակցությունը ինչպես պարերագմի ընթացքում, այնպես էլ հետզինադադարյան շրջանում իր՝ հայոցնության աշխարհաբններն անընդմեջ շարունակելու համար, որոնք խիստ բազմաբնույթ և բազ-

104 „Deutschland und Armenien...“, էջ 110-111:

105 J. Pomiankowski, Der Zusammenbruch des ottomanischen Reiches, Wien, 1928, p. 176.

մագան էին. որբանոցների հիմնում, մահմեդականների կողմից առևանգված երեխաների և կանանց ազատագրում, բուժսպասարկում, աշխատարեղերի սրելծում, նյութական օգնություն չբավոր ընտանիքներին, բնակչին արարություն, աղքատախնամություն, նոր բնակավայրերի հիմնում, վերաբնակեցում...:

Գործելով չափազանց անուպաստ իրադրություններում՝ Լևփախուսը երբևէ չընկրկեց: Նա մշտապես հեպեում էր խղճի և բարոյականության թելադրանքին՝ պարբերաբար հրաժարվելու այն ամենից, ինչը նրան կարող էր խանգարել իր սկզբունքներին հավաքարիմ մնալ, և համոզված, որ Նայկական հարցը, որքան էլ այն քաղաքական շահարկումների ենթարկեն, սրանալու է իր արդար լուծումը. «Նայկական հարցը հերածգվել է, բայց չի վերացել,- գրում էր նա Լոզանի կոնֆերանսի առնչությամբ,- և այն ցանկացած ժամանակ դարձյալ ի հայտ կգա, երբ այս կամ այն պետությանը անհրաժեշտ կլինի Թուրքիայում նվաճումներ կատարելու համար այն օգտագործել որպես պարրվակ: Այդ ժամանակ կհիշեցվեն նաև Վիլսոնի սահմանները և հայկական ջարդերը: Քանի դեռ Նայկական հարցը լուծված չէ, այն շարունակ, դամոկլյան սրի պես կճոճվի Թուրքիայի գլխավերևում, մինչև վերջապես ասիական Թուրքիայի համար կդառնա նույնը, ինչ հունական կամ բուլղարական հարցն է եղել եւրոպական Թուրքիայի համար»¹⁰⁶:

106 J. Lepsius, Die Lage in Armenien, „Der Orient“, 1923, p. 18-19.